

ԱՐՃԻՇՆԱԿԱՆ ԳՐԵԹԷՆԻ, ՔԱՂՎԱՆՆԵՐԻ ԵՆ ԲՐԹՎԵՐԻ ՎՈՆՔԵՐԸ

Արճիշահովիտ գրեթե կը համապատասխանէ այժմեան Արճէշի: Վարդան Աշխարհազարի համաձայն Արճէշի հետ երբեմն միացած է Քաղբերունիքալ: «Աղիովիտն եւ Քաղբերունի Արճէշ է, ուր կան սուրբ ուխտքն Մեծոփայ եւ Արծաբեր եւ Ուռնկարու սուրբ Նշան» (Saint-Martin, Mémoires, II, էջ 426): Իսկ Արճիշ — կից Արճէշի — Վանայ նահանգի մէկ գաւառակը կը կազմէ եւ կը համապատասխանէ Խոտիստունեաց գաւառին մէկ մասին: Անոր միւս մասն է Ախլաթ կամ Խլաթ (Միրախորեան, Ուղեւորութիւն, Գ., էջ 36), որուն վանքերուն մասին այլուր:

1. ԱԿԱՆԻՑ Ս. ԳԵՈՐԳԻ ՎԱՆՔԸ

Քաղբերունեաց-Արճէշ-գաւառի Ականցի անուանի վանքն է Ս. Գէորգ, որ ետքէն եկեղեցւոյ վերածուած: Աւանդութեան համեմատ հոս կը պահուին Ս. Գէորգ զորավարի մատուցներէն: Նմանապէս աւանդութեան համաձայն առաքելաշէն է Ս. Գէորգ (Միրախորեան, Ուղեւորութիւն, Գ., էջ 28-Շէրենց, Սրբափայտեր, էջ 86-88. Արեւելք, 1890, Թ. 1820 եւ 1876. հմտ. եւ էփրիկեան, Բնաշխ. Բառարան, Ա., էջ 77):

Բաւական յիշատակութիւններ կան Ս. Գէորգի մասին: «Ընդ հովանեաւ կմբէթայարկ եւ խորանածեւ սուրբ եկեղեցւոյս, որ յանուն սրբոյն Գէորգայ զարավարին կառուցեալ կայ» Յովհաննէս քահանան 1441ին ձաշոց մը կը գրէ (Պորոս, Աղբար, Ա., էջ 223-224 եւ Նոտարք, էջ 124): Հաւանօրէն նոյն Յովհաննէս 1450ին կ'արտադրէ Աւետարան մը (Աճառեան, Յուց. հայ. ձեռ. թարգմ. էջ 66): Նաեւ Յովհաննէս երէցի ձեռքով Աւետարան մը՝ «Գրեցաւ ի քաղաքս Քաղբերունոյ Արճէս կոչեցելոյ, ի դուռն սուրբ տաճարիս Գէորգեայ զորավարի եւ կաթողիկէ Ս. Աստուածածնիս» (Ակինեան շ. Ն., Հաւաքունն յիշատ. Տէր Աւետիսեանի Նոր Զուգայի հայ. Ձեռագրաց ցուցակէն Թ. 68): Յովհաննէս ունի զեռ ուրիշ արտադրութիւններ (հմտ. Նոտարք, էջ 209 եւ 217, Կարինեան, Յուց. հայ. Ձեռ. էջմ. 1579):

Զարմանալի է որ՝ 1466ին Ականցի մէկ կը գրուի Աւետարան մը եւ Ս. Գէորգի ա-

նունը լուսթեամբ կ'անցնուի եւ միայն Յիրանաւոր Ս. Աստուածածին՝ կը յիշուի (Աղբար. Հանդ., 1897, Բ., էջ 287):

2. ԱՅՐԻ ԶՈՐԻ ՎԱՆՔԸ

Քաղբերունեաց մէկ շինուել է Այրի ձորի վանքը, որուն մասին ծանօթ են ինձ հետեւեալ յիշատակարանները, որոնք կարեւոր տեղեկութիւններ կը բովանդակեն: Երկու յիշատակարաններն ալ ժԳ. դարու վերջերէն են: Գուցէ կարելի ըլլայ ասկէ ենթադրել որ՝ անապատս այդ շրջանին հաստատուած եւ կամ աւելի ճիշդը՝ զարգացած ըլլայ:

Առաջին յիշատակարանն է՝ «Փառք... ի թուիս ԶԽԳ (1294) գրեցաւ սուրբ աւետարանս... ի վանս հրեշտակարնակ, որ կոչի Այրի ձոր ընդ հովանեաւ սուրբ Նահատակացս եւ աստուածարնակ խորանացս սուրբ Յարութիւն եւ սուրբ Կարապետ եւ սուրբ Լուսաւորիչ: Ի յառաջնորդութիւն ամենիմաստ ամենագով քաղցրահայեաց եւ արդիւնակատար վարդապետի Ստեփաննոսի... եւ ես դժող Աստուածատուր անուն... յիշման արժանի առնէք... եւ զհոգեւոր եղբայրս զՎարդան քահանայ յիշեցէք, զի զթուղթս կովկեց եւ զհոգեւոր հայրն իմ յիշեցէք զԳրեղոր» (Ակինեան շ. Ն., Հաւաքունն յիշատակարանաց, Երեւան, Թ. 87, Աւետարան):

Երկրորդ յիշատակարանն է՝ «Արդ գրեցաւ սա (Մաշտոց) յամի թուականութեանս Հայոց ԶԽԷ (1298ին) ի գաւառիս Քաղբերունոյ յանապատիս յԱյրի ձորոյ ձեռամբ յոյնամեղ եւ փժուն գրչի Խաչատուրի ի խնդրոյ սրբասէր եւ պատուական քահանայի Գաթի, որ ստացաւ զսա յիշատակ արդեանց իւրոց եւ ետ ի վանս կուսանաց յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց ընդ նմին եւ գառաշնորդ իւր զԽաչատուր քահանայն, որ եղև

1 Միրանաւոր Ս. Աստուածածին յիշուած է եւ որիչ անգամներ ալ: Գանձարան մը, որ այժմ Ս. Ղազարի մէջ կը գտնուի, 1425ին կը գրուի՝ «Ի յերկերս Քաղբերունոյ ի դուռն կմբէթայարկ տաճարիս, որ յանուն սուրբ Աստուածածնի առ սոսա առաջնորդի ուխտիս քաջ հետորի Կարապետի եւ տէր Ստեփաննոսի արագակի, ի զանն ժամանակի յորում Վասպուրական աւերեալ եղև ի Սքանաքէ» (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ., շ. Պատմութեանէ): Ասկէ բաւական վերջ դեռ Աւետարան մը կը գրուի՝ «Ի քաղաքս Արճէշ ի դուռն Միրանաւոր Ս. Աստուածածնի» (Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 492-500): — Գրեւել կու տամ որ Միրանաւոր Ս. Աստուածածին անունով ուրիշ եկեղեցիներ եւ վանքեր ալ կան Հայաստանի մէջ եւ այլուր:

առիթ զործոցս եւ զՎարդան քահանայ, որ զթուղթս գեղեցաց» (Ակինեան շ. Ն., Հաւաքունն յիշատակարանաց, Գեղամ էֆէնտիէն արտադրուած):

Զոյգ յիշատակարաններէս հասու կ'ըլլանք թէ՛ 1294ին Այրի ձորի առաջնորդն եղած է ամենիմաստ եւ արդիւնակատար Ստեփաննոս վարդապետ եւ աղա անոր յաջորդ գրուած է Խաչատուր քահանայ:

3. ԱՍՊԻՍՆԵՎԱՑ ԿԱՍ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՎԱՆՔԸ

Քաղբերունեաց-Արճէշ-գաւառին Ասպիսակ կամ Ասպիսնակ եւ Ս. Յարութիւն գիւղերու մերձ կառուցուած է Ասպիսընկայ կամ Ս. Յարութեան ուխտը: Աղանեանցի համեմատ Ս. Յարութիւն կոչուած է այս վանքը համանուն գիւղին մօտ ըլլալուն համար (Գրեան ժ., էջ ԻԸ): Նմանապէս կարելի է խորհիլ թէ՛ Ասպիսընկայ վանք յորջորջուած է համանուն միւս գիւղի մերձ շինուած ըլլալուն հետեւանքով: Իսկական եւ նախկին անունն եղած ըլլալու է Ս. Աստուածածին, ետքէն Ս. Յարութիւն անուանուած է համանուն գիւղին եւ անոր եկեղեցւոյն անուններովը:

Այս վանքին շէնքին մասին տեղեկութիւններ կը պահուին: Հետեւաբար կարելի չէ դայն նկարագրել: Միայն թէ բարեբաստօրէն Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ կայ այս արձանադրութիւնը. «Ի ժամանակս տէրութեան Ուլաուն դանին ես ծառայ ծառայիցն Աստուծոյ Արբահամ տեսուչ գաւառիս Քաղբերունս տուաւ ինձ տեղիս այս (ի) Տեառնէ սորին Սահմադին կոչեցեալ եւ շինեցի զեկեղեցիքս նախ զսուրբ Աստուածածինս: Իսկ ի թագաւորութեանս Արդու դանին ի հայրապետութեան Տեառն Ստեփաննոսի զսուրբ Յարութիւնս ի կորոյ շինեցի եւ զամենայն շինուածս նորոգեցի: Արդ աղաչեմ զամենեան յիշեալք ի Քրիստոս զպարոն Սահմադին նախնիւր եւ հարազատաւք եւ զիտղեւոր հայրն իմ զՄէլէք Ստեփաննոս եւ զքեռայրն իմ զԽաչիկն քերքն իմով եւ գաւառաց իւրեանց, զի բազում նպաստ եղեն տեղոյս շինութեան եւ զծնողսն իմ եւ զեղբարս իմ եւ զազգատոճման իմ յիշեալք ի Տէր եւս եւ գաւանդատուքս եկեղեցեացս զպարոն Սահմադինն տանուտէրաւքս Ասպիսնակայ, զի սեփական աւանդսն որ կարգեալ էր յառաջնոցն նախ քան գաւերն ի խորագմէն. դարձեալ

հաստատեցին տեղոյս: Ի մարգէն: Տ: բարդի տեղ: եւ: Բ: արա մին: Ժ: մորթոյ տեղի եւ միւսն ժ: եւ ի սեւակն: Ի: բարդ խոտեղի եւ զշուրն վրահանից յամէն Բ շարաթ զտիւ եւ զգիշեր եւ ես պարոն Սահմադին զպեղն Մեծոփ իւր մղբայիւքն եւ խարհանիւք եւ քրդագիշերոցն եւս մէլիք ստիւս տանուտէրաւքն աղոյին խոտէն: Ի բարդի տեղ: եւ ըվարերի տանուտերքն: Ի: բարդի տեղ եւ իաշիկն զայդին ի գողիսն: Վ: տակ եւ աւտարչան եւ մեթարն զիւրեանց այդին ի գողիսն: Բ: տակ եւ պարոն փռանդն արա մին ի քաղաքն: Ե: մոթոյ տեղ զնեցի արա մին եւ ոչ հեռի յայն արաչն: Ժ: մոթս տեղ եւ տվի եկեղեցեացս եւ տվին ի քաղաքն տներ եւ: Բ: կուղպակ եւ սոքա են աւանդ եկեղեցեացս աւանդատուքն յիշեալ եւ աւրհնեալ լիցին ի տեառնէ: եւ պակասեցուցանողքն պակասին ի թւոյ արդարոցն ամէն: եղիցի եւ շինեցաւ սուրբ Յարութիւնս ի թվիս ԶԽ: ի փոսս Քրիստոսի» (Սարգիսեան, Տեղադրութիւնք, էջ 268):

Վերոյիշեալ Արբահամի մասին ունինք բաւական յիշատակադրութիւններ: Աւետարան մը կը գրուի՝ «Ի թուիս ԶԻ (1281) ի գաւառիս Արճիշոյ ի վանս Ասպիսընկա(լ) ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս յառաջնորդութիւն հաւր Արբահամու...» (Conybeare, Cat. arm. Brit., էջ 8): Յովսէփ՝ Քաղաւածոյք մը կ'արտադրէ՝ «Ի թուականիս ԶԽԷ (1298) ... ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Յարութեանս ի գաւառիս Արճիշոյ յանուանեալ ուխտիս Ասպիսնակ(ս) վանք յառաջնորդութեան տեղոյս Տէր Արբահամու» (Քոսեան շ. Յ., Հայք ի Ձմիւնիս եւ ի շրջակայս, Բ. հատ., էջ 82): Յաջորդ տարին այն Յովսէփ կ'արտադրէ Սողոմոնի զրքերն ու ժԲ. մարգարէք՝ «Փառք... ի թուականութեան հայկազեան տոճիս տոմարիս Զերորդի քառասներորդի Ը երորդի (1299) ես անպիտանս ի մանկունս եկեղեցւոյ Յովսէփ մակադրեալ անուն գրեցի... ի գաւառիս Արճիշոյ կոչեցեալ յանուանեալ անապատիս Ասպիսնակ վանք սրբալի եւ պայծառ անուամբ շքեղացեալ ընդ հովանեաւ սրբոյ աստուածարնակ խորանաց սրբոյ Յարութեանս պատուեալ անուամբ Յարութեան փրկչին Յիսուսի եւ սրբոյ Աստուածածնիս աւրհնեալ եւ միշտ կուսին Մարիամու:

Արդ հայցեմ... յիշատակի արժանի առ-

նել զՍարկաւազ կրանաւոր, որ է հաւր-  
եղբայր մեր եւ զեղբայր նորա զԱստուածա-  
տուր եւ զԹովմա քահանայ... Եւ յաւէտ  
զհարազատ հոգեւոր վարդապետն մեր զՄխի-  
թար, որ զաւրինակն շնորհեաց: Բայց զրեցաւ  
ի սաստիկ եւ յընտրելագոյն աւրինակէ...: Եւ զԱստուածատուր քահանայ (յիշեցէք) որ  
բազում սատարութեամբ աւգնական եղև  
մերումս կարեաց, զի եւ նա հասցէ անճառ  
պարգեւեաց» (Ակինեան Հ. Ն., Հաւաքումն  
յիշատ. էջմ., Թ. 193):

Դարձեալ 1304ին Յովսէփ՝ «ի գաւառիս  
Արձիշոյ յաստուածունակ անապատիս Աս-  
պինակ վանք կոչեցեալ» կը զրէ աւետարան  
մը (Ակինեան Հ. Ն., Հաւաքումն յիշատա-  
կարանաց. առնուած Տէր Աւետիսեանի Նոր-  
Ջուղայի հայ. ձեռագրաց ցուցակէն, Թ. 37):  
Արրահամ առաջնորդի մեռնելէն վերջ անոր  
յաջորդ կ'ընտրուի Ստեփանոս, որուն օրով  
կը գրուի Պօղոսի թղթերու մեկնութիւնը՝  
«Գրեցաւ... ի թուականութեան հայկազ-  
նեան տումարիս 202 (1307) յանապատիս  
Ասպինակայ ի հայրութեան Ստեփաննոս վար-  
դապետի Ժրի եւ ամբօր ընդ հովանեաւ  
սուրբ Յարութեանս եւ այլ սրբոց (զրիչն է  
Ղազար եւ ստացողը՝ Սիմէոն. հմմտ. Սիւր-  
մէեան, Յուլ. հայ. Ձեռ. Հարչակի, Երուսա-  
ղէմ 1935, էջ 247—248):

Ստեփանոսի առեւ Աւետարան մըն ալ  
կ'արտագրուի՝ «Գրեցաւ սուրբ Աւետարանս  
ի թուիս 202 (1308) յանապատիս Ասպինակայ  
ընդ հովանեաւ սուրբ Յարութեանս եւ սուրբ  
Մաւրս լուսոյ Աստուածածնիս յառաջնոր-  
դութեան Ստեփաննոս վարդապետի, զրե-  
ցաւ ձեռամբ Ղազարի սուտանուն կրանա-  
ւորի ի վայելումն Հայրապետի (Բարխուդա-  
րեան, Արցախ, էջ 143. հմմտ. եւ Թովմեան,  
Յուլ. հայ. Ձեռ. Դաղեան Վ. ի Բ., էջ 46):

Այս երկու առաջնորդներու օրով բաւա-  
կանաչափ ծաղկած վանքս անձանօթ պատ-  
ճառներով ժամանակ մը կ'անջքանայ, բայց  
ետքէն հոն երեւան կու գան Յակոբ վարդա-  
պետ<sup>2</sup> (Թովմ. Մեծ., էջ 52, եւ Նօտարք,  
էջ 32—33), որ Գրիգոր Տաթևացիին կա-  
շակերտի եւ Յովհաննէս ճգնաւորը՝ «Եւ էր

<sup>2</sup> Մեր Մատենադարանին Թ. 593 Հաւաքածոյի  
մէջ կը խնդրուի յիշել՝ «Այլ եւ զՅակոբ խնդրոյ,  
բանի, որ մականուն Ապիստոլիկեցի կոչի եւ զեղբայրն  
իմ Անդրէաս կուսակիցն քահանայ յիշեալիք թվ. ՊԿԳ  
(Ոսկեան Հ. Հ., Մայր ցուց. հայ. Ձեռ. Մխիթ. Մատ-  
ի վիճակ, Բ. հատ., էջ 49 [անտիպ], հմմտ. նաեւ  
Խառատասայ կամ Արծուարեր Մ. Աստուածածնի  
վանքը):

սա ի Քաջբերունեաց սուրբ ուխտէն Յարու-  
թեան<sup>3</sup>, որ Ասպինակայ վանք վերակոչի ի  
զեղջէն Վախանից» (Թ. Մեծոփ., էջ 71): Իսկ  
հոն թաղուած է Յովհաննէս Ոսպնակեր,  
որուն տապանագիրն է՝ «Այս է յարկ տա-  
պանի Յովհաննէս վարդապետի թվին 229  
(1387, Աղանեանց, Դիւան, Ժ., էջ ԻԸ.  
հմմտ. Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 268  
եւ Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 166):

Աքանտարի ասպատակութիւններու հե-  
տեանքները նաեւ հաւանօրէն այս վանքին  
մէջ ալ զգալի կ'ըլլան (Թ. Մեծոփ., էջ 87):  
Ետքէն հոն կը գրուին Շարակնոց մը եւ Աւե-  
տարան մը (Կարենեան, Յուլ. հայ. Ձեռ.  
էջմ. Թ. 1584 եւ Տէր Յովհաննիսեան, Պոմ.  
Նոր Ջուղայի, Բ., էջ 304—305):

4. ԱՐԾՈՒԱՐԵՐ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԿԱՄ ՍՈՒԽԱՐԱՅ  
ԿԱՄ ԽԱՌԱԲԱՍՏԱՅ ՎԱՆՔԸ

«Ականց աւանի հիւսիս արեւելեան կողմ,  
Ծաղկանց լեռան հարաւային աջ թեւին տակ  
հովանաւորուած՝ կառուցուել է ամենահնա-  
դոյնն Արծուարեր վանք՝ յանուն սուրբ Աս-  
տուածածնի, Սօսկուն գիւղի վերեւ:

Ոչ միայն Քաջբերունեաց գաւառի, կա-  
րելի է ասել, որ ամբողջ Վասպուրականի  
նահանգում գտնուած նշանաւոր վանքերի  
մէջ զարմանալի ճարտարագործութեամբ,  
հին գեղարուեստական ճաշակով տասն հինգ  
զար յառաջ սկսուել է Քաջաց երկրի մէջ:  
Սորա լայնածաւալ ու բոլորածեւ դաւիթն՝  
խորին ուշադրութեան մի արժանաւոր շէնք  
է, առանց ինչ եւ է յենարանի-սիւների,  
բարձրակատար կամարակապ կաթողիկէն  
իւր բոլոր պարունակութեամբ բարձրանում  
է միայն չորս անկիւններից հաստատուած  
որմերի վրայ, միայն ցաւալին այն է՝ կաթու-  
ղիկէի վերի ամենաբարձր մասն, կոնաձե-  
լմբէթն, բաւական տարի յառաջ փլելով  
կրկին նորոգելն անկարելի է եղել:

Արծուարեր վանքը խորին տպաւորու-  
թիւն է թողնում այցելուին վրայ, առաջին  
անգամ տեսնելիս մարդ կարծում է, որ  
ինքը մտնում է մի անտիկ դղեակի մէջ,  
չորս կողմից պաշարուած աշտարակներով:

<sup>3</sup> «Նօտարք»ի հեղինակը կը զրէ (էջ 28, ճ. 3)  
«Այն ուխտ այժմ գիւղ լեալ է ի դարաւոր ժամանակաց  
հետէ եւ կայ ի հարաւային կուսէ Մեծոփոյ ուխտին եւ  
կը յաւելու (ճ. 4)՝ «Թերեւս մերձ գոյով ուխտն շի-  
նին Ասպինակայ գանուն նորա ընկալեալ է»: — Աս-  
պինակի գիւղի եկեղեցոյն մէջ է Սարգիս Կունտի Ղա-  
կասի աւետարանի մեկնութիւնը (Սիսն, 1940, էջ 96):

Նա չունի տաճար, միայն կենտրոնի սեղա-  
նունն է նորա մեծաշէն պատարագամտոյց  
խորանն եւ ներքեւումն ալ ու ճախ կողմից՝  
նոյնպէս երկու մեծ խորաններ՝ երկու ան-  
յայտ գերեզմաններով: Եկեղեցւոյ շուրջն  
պատում է ասագին հաստահինն պարիսպ  
չորս անկիւնում շինած չորս աշտարակ-  
ներով, յատակի խրամներով: Այդ է միայն  
այդ հինաւուրց սրբավայրի եզակի հաստա-  
տութիւնն, գաւթի հիմքերի տակից նոյնպէս  
սրբատաշ քարերից շինուած են մի քանի  
ներքնաուղիները նրբացքներով, որոնք ու-  
ղի յարարերութիւն ունեն գէպ վեր աշտա-  
րակներ, դոցա մի կողմումն են եւ երկու  
հոյակապ դարպասները, շտեմարանները, ցո-  
րենի հորերը, բոլոր քարուկիրայ եւ սալայա-  
տակ որմերով, որոնք բոլորը վեր առած...  
կաղմում են մի անմատչելի ամբոց, գուցէ  
տասն հինգ զար յառաջ այդ մտքով էլ շինած  
լինին Քաջբերունցիք, երբեմն պաշտելատեղի  
եւ երբեմն պաշտպանութիւն ամբոց» (Շէ-  
րենց, Սրբավայրեր, էջ 89—90):

Շէրենցի նկարագրութիւնը կը հաստա-  
տեն նաեւ Յիշատակագրութիւնները, որոնք  
եկեղեցին կ'անուանեն՝ «հոյակաւոր, բար-  
ձրաբերձ եւ պայծառաշէն» (Աղգաղբ. Հանդ.  
1897, Բ., էջ 281—282), զարձեալ՝ «հոյա-  
կապ եւ գեղեցկաշէն» (Երեւակ, 1858,  
էջ 204—205): Հետաքրքրական էր իմանալ  
թէ՛ ինչ հիմերու վրայ Շէրենց վանքս տա-  
նուհինգ զարու հնութիւն կը համարի: Ան-  
շուշտ աւանդութեան վրայ կ'օրհնէ:

Այս վանքը Արծուարեր կոչուած է իր  
եկեղեցւոյն անունովը. 1578ին գրուած Աւե-  
տարանի մը յիշատակարանին մէջ կը կար-  
դանք՝ «ի յերկիրն Քաջբերունու որ կոչի  
Արձէշ՝ ի սուրբ ուխտս Սուխար թագաւորի,  
որ այժմ Խառատասայ վանք վերածայնի,  
ընդ հովանեաւ Արծուարեր սուրբ Աստուա-  
ծածնին ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս  
Մինաս եպիսկոպոսին» (Գուշակեան, Յուլ.  
հայ. Ձեռ. Սերաստ., էջ 40): Կամ՝ ասկէ  
շատ յառաջ ուրիշ յիշատակարանի մէջ (Գր.  
Տաթևացւոյ գործերու Հաւաքածոյի մէջ)  
կայ՝ «Գրեցաւ ՊԿԳ ի վանս Սուհարայ ընդ  
հովանեաւ սուրբ Աստուածածնիս, որ Ածը-  
ւարեր կոչի (հմմտ. Macler, Rapport sur  
une miss. scient. en Arm. Rus. 1911, էջ 16  
կամ Ոսկեան Հ. Հ., Մայր Յուլ. հայ. Ձեռ.  
Վիենն. Մխիթ. Մատ. [Բ. հատ. անտիպ],  
Թ. 993, թղ. 234ա. էջ 49): Մինչ յիշատա-

կարանի մը մէջ կը հանդիպինք «յերկիրս  
Քաջբերունու ի սուրբ ուխտս որ ասի Խա-  
ուար(ա)ստայ ի գոււն սուրբ Աստուածաբեր  
Աստուածածնին» (Հալայեանց, Յուլ. հայ.  
Ձեռ. Վասպ., էջ 679):

Վանքիս իսկական անունն եղած պիտի  
ըլլայ Սուխարայ կամ Սուհարայ վանք՝ Սու-  
խար թագաւորի անունով, իսկ Խառատա-  
սայ կամ Խառատաստայ վանք կոչուած է  
որովհետեւ Խառատաստ գիւղի մօտ էր  
(հմմտ. Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 127  
եւ Բնաշ. Բառարան, Բ., էջ 150): Հ. Ին-  
ճիճեան եւ անոր հետեւողութեամբ էփրիկեան  
Արծուարերի եւ Խառատաստի կամ Սուխա-  
րայի վանքերն իրարմէ կը բաժնեն (հմմտ.  
անդ, էջ 127 եւ Բնաշխ. Բառարան, Ա.,  
էջ 306 եւ Բ., էջ 50) եւ կարծեմ ասոր պատ-  
ճառն ըլլայ Վարդան Աշխարհաբերի այս  
խօսքը՝ «Աղիովիտն եւ Քաջբերունի Արձէշ է,  
ուր կան սուրբ ուխտքն Մեծոփոյ եւ Ար-  
ձուարեր<sup>4</sup> եւ Ունկարու Ս. Նշան (Saint-  
Martin, էջ 426): Եւ սակայն Վարդանի լու-  
թիւնը եւ կամ Խառատաստի վանքն անյիշա-  
տակ ձգելը պէտք էր մտածել տալ, քանի որ  
գիտենք թէ՛ ժամանակին Մեծոփի պէս զար-  
գացած վանք մըն էր այն, հետեւաբար պիտի  
խորհինք որ Արծուարեր բնելով Խառատա-  
սայ վանքը կ'ակնարկուի:

Յաւալի է, որ Սուխարայ վանքի հիմ-  
նարկութեան թուականը<sup>5</sup>, հիմնադիրը եւ  
յարակից պարագաները պատմութիւնն ու  
աւանդութիւնը մեզի չեն հասցուցած: Բայց  
ան եղած է գիտութեան վայր մը, ուր հաւա-  
քուած են ուսումնաստենչ անձինքներ եւ կրցե-  
ր են կարող վարդապետներու մտքին ու սրտին  
պաշարէն օգտուել: Եղած է «մայրաքաղաք»  
մը, ուր հաւաքուած են գրութիւններ, ուր  
արտագրուած են երկեր ու գրուած նոր գոր-  
ծեր եւ ուր անխտիր բաշխուած լոյս՝ խաւար  
մտքերու: Վանքիս գործունէութեան եւ  
ծաղկումի շրջանը եղած է ԺԴ.—ԺԶ. դար:

Արդէն 1325ին հոս կը գրուին ԺԲ. Մար-  
գարէից եւ Յօրի գրքերը եւ իբրեւ առաջնորդ  
կը յիշուի Ղազար՝ «Գրեցաւ սա ի թվա-  
Հայկ. տումարի 227 (1325)<sup>6</sup> ի գաւառիս

<sup>4</sup> Ծանօթ է Արծուարեր կամ Արծբերունց վանք մը  
Ուսումնաց պատմի մէջ հմմտ. անդ (կամ՝ Աղգաղբ.  
Հանդ., 1911, էջ 53):

<sup>5</sup> Լեւոնեան անոր հիմնարկութիւնը շատ հին կը  
դնէ (Բիւզանդիոն, 1900, Թ. 1196):

<sup>6</sup> 1337ին կը յիշուի՝ Տէր Արրահամ, տեսուչ գա-  
ւառիս Քաջբերունց» (Սարգիսեան, Տեղագրութիւնք,  
էջ 268. հմմտ. Ասպինակայ վանքը):

Քաջբերունույ ի մենաստանս Սառաբասա, ի վանս որ կոչի Սուհարա, ընդ հովանեա սուրբ Աստուածածնիս...: Յառաջնորդութեան տեղոյս Ղազար առն հեղի եւ խաղաղարարի նմանեալ... նախնոյն Ղազարու» (Թոր. Աղբար, Բ., էջ 332): Շատ տարիներ վերջ 1383ին գրուած Եղիշէի ոսկեմատեանը յիշատակ կը գրուի վանքիս եւ ցանկութիւն կը յայտնուի զայն Հանել՝ «Ի դրանէ սուրբ Աստուածածնիս Սառաբասայ վանուց» (Թոր. Աղբար, Բ., էջ 334): Իսկ 1391ին<sup>7</sup> կը գրուի Ոսկեփորիկ մը՝ «Գրեցաւ Ոսկեփոր ժողովածոցս ձեռամբ յոգնամեղ եւ բազմասխալ (Գրիգոր) գրչի պիտակ անուն վարդապետի ի վանս Սուխարայ, որ այժմ կոչի Սառաբասայ, ընդ հովանեալ ամենասուրբ Աստուածածնին ի խնդրոյ բազմերջանիկ եւ հեղահոգի առաջնորդի սուրբ ուխտիս տէր Զաքէոսի, որ ստացաւ զսա ի վայելս անձին իւրոյ եւ յետ աստեացս յիշատակ բարի ի դրան սուրբ եկեղեցոյս, բայց թող եւ զայս եւ այլ եւ շատ դրեանք ստացան սրբազան եպիսկոպոսն մեր տէր Զաքէոս ի պայծառութիւն սուրբ եկեղեցոյս նշաններ եւ նախորտանի. Աստուած զիւր հոգին պայծառացնէ ամէն. Պի թուին<sup>8</sup>» (Ակինեան Հ. Ն., Հաւարունն Յիշատ. — Թօփճեանի Արմաշու Զեռ. ցուցակէն Թ. 5):

Յիշատակարանիս մէջ յիշատակուած Զաքէոս եպիսկոպոսի օրով Սառաբաստու վանքը կ'իջեւանի մեծն Սարգիս Սորբեցի վարդապետը եւ զայն կը վերածէ գիտութեան փեթակի մը (Թովմ. Մեծ. Պատմ., էջ 35): Սարգիս իր գալուստնէն յառաջ Յովհաննէս Սաղազ կը գրէ՝ «Յերկիրն Քաջբերունեաց ստանալ ինքեանց տեղի բնակութեան»: Յովհաննէս կու գայ՝ «Յաստուածաբնակ եւ ի հրաշագործ ուխտն Տիրամօր Աստուածածնին ի մայրաքաղաք վանսն Սուխարայ, որ այժմ Սառաբասայ վանք կոչի, առ երջանիկ եւ հեղահոգի այրն ցանկալի Տէր Զաքէոս եպիսկոպոս գաւառին՝ տալ նոցա տեղի բնակութեան»: Զաքէոս արդէն լսած ըլլալու էր Սարգիսի համբար եւ իմանալով Յովհաննէս արեղային տեսիլն ալ սիրով Սարգիս վարդապետը Սառաբաստի մէջ կ'ընդունի. «Եւ եկեալ վարդապետն Սարգիս

ընակեցաւ յաստուածաբնակ ուխտն սուրբ Աստուածածնին եւ նստաւ յաթոռ վարդապետութեան: Եւ ժողովեցան առ նա բազումք ի դրոց աշակերտաց եւ ի կրօնաւորաց եւ յուսումնասիրաց աւելի քան 60 կարգաւորք եւ ուսումնականք: Եւ ուսոյց դամենայն ծովեղերս Վասպուրական դաւառիս ուսմամբ եւ գիտութեամբ եւ ժամօք եւ պատարազօք: Եւ տեսանէին զսուրբ ուխտն իբրեւ զվերինն Երուսաղէմ յ838 ամէն թուականիս մեր մինչեւ յ851 ամն» (Անդ, էջ 37. հմմտ. նաեւ Յովսէփեան Գարեգին վարդապետ, Թովմ. Մեծոփեցու կեանքը, Վաղարշապատ 1914, էջ 1 եւ 14. հմմտ. եւ Տաշեան, Մայր ցուցակ, էջ 418): Սարգիսի քով 1393ին Մխիթար կը գրէ Մեկնութիւն Հնգեմատեանին ի վանս Սուհարու, որ կոչի Սառաբասայ<sup>9</sup>» (Երեւակ, 1858, էջ 204—205):

Զարգացումի եւ վերելքի այս ուրախասիր օրերուն զժրախտարար Զաքէոս կը մեռնի եւ անոր աճիւնը Սառաբաստու եպիսկոպոսի մօտ կ'ամփոփուի: Նաեւ երբ Սարգիս վարդապետն ալ ակադճուն գործունէութենէ վերջ կը վախճանի (1401) նա եւս կը գրուի՝ «Ի շիրիմ տապանի մերձ եպիսկոպոսացն սրբազանից Սառաբաստու եւ Զաքէոսի» (Թ. Մեծոփ., էջ 37 եւ Զարբհանէլեան, Պատմ. Հայ. դպրութեան, Բ., էջ 150—151. հմմտ. եւ Կոստանեանց Կ. Հայոց վանքերը, Մոսկուա, 1886, էջ 69):

Սարգիս վարդապետին փոխումէն յետոյ՝ «Յաջորդեաց զաթոռ վարդապետութեան երջանիկ եւ աստուածամերձ այրն՝ ցանկալին հրեշտակաց եւ մարդկան պատկառելի քաջ վարդապետն Վարդան՝ զօրով ի սուրբ ուխտէն Հոգւոց վանայ» (Անդ, էջ 40—41): Վարդան աւելի լայն եւ արդիւնաբեր գործունէութիւն կ'ունենայ (Անդ, էջ 41 եւ 49), սակայն հակառակորդներէ հալածանքներու ենթարկուելով Սաղապատ կ'անցնի եւ հոն կը մեռնի (Անդ, էջ 41 եւ 50): Անոր յաջորդը՝ Գրիգոր Սաղապատ Սարգսէն սկսած ու վարդանէն շարունակուած զպրոցը Յիպոնավանքը կը փոխադրէ (հմմտ. անդ):

Այս շրջաններուն՝ 1402ին Անանիա կը կանգնէ խաչքար մը՝ «Ես Վարդապետ Անանիա վարդապետս կանգնեցի սուրբ խաչս բա-

րեխօս եղբորն իմոյ, Եղիա կրօնաւորին, որք երկիր պապանէք յիշեցէք ի Քրիստոս» (Նօտարք, էջ 16): Իսկ Կարապետ վարդապետ կը կանգնէ 1404ին խաչքար մը Զաքէոս եպիսկոպոսի համար. «Ես Կարապետ վարդապետս կանգնեցի զխաչս բարեխօս առ Աստուած Տէր Զաքէոսի առաջնորդի ուխտիս որք երկիրպապանէք յիշեցէք ի Քրիստոս» (Նօտարք, էջ 20):

«Նօտարք»ի հեղինակին համաձայն այս ատենները (1409ին) տեղի կ'ունենայ՝ «Վերաշինութիւն Սառաբաստայ ուխտին. ի Ղառնութեան Ղարայ ՈւսուՓին եւ ի պարոնութեան Իսպանին եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս Կարապետ վարդապետի սուաւ նախախառնով (անդարձ վճռաւ) մուլք Ի. մութ ստին ի կտրած քար. սուրբ Աստուածածնիս զիւրն Անիշատ, ի Շինամէջ երեսուն մութ տեղ ջրով Ի. ոստին, ի փակած ԺԵ. մութ տեղ, ի Հայրիկէ ԺԵ. մութ տեղ. ի Վառնչիկն երկու խաչարտն, երկու ակն ջաղաց. ի բոլոր մարդն Ա. արտ. ի բլուրն Ա. արտ. յԱկանց Դ. արտ. յԻրիշատ Ա. արտ. ի Մկնաւերն Բ. արտ. ի Սառաբաստ Զ. արտ, Բ. ջաղաց. ի Սոսկուն Բ. արտ. ի Գանձակ այգի մի: Ով որ հակառակ լինի զանէճքն Ուղային առնու եւ որ կամակից լինի օրհնի Աստուծոյ եւ յամենայն սրբոց ամէն» (Նօտարք, էջ 31—32): Ինչպէս կը տեսնուի այս տեղ Սուխարայ առաջնորդ կը յիշուի Կարապետ վարդապետ, բայց 1413ին Սառաբաստի վանահայր կ'անուանուի Յակոբ վարդապետ՝

«Արդ գրեցաւ զիրքս բողձալի Ի դաւառս Քաջբերունի, Որ յԱրձիշոյ այժմ անուանի, Ի յանապատս հրաշալի, Որ Սառաբաստ անուն կոչի, Ընդ հովանեալ Աստուածածնի, Կմբեթասարգ վիմարդեանի, Պի թուականի, Ի կաթողիկոսութեան մերոյ վեհի, Յակոբ անուն հայրապետի, Եպիսկոպոսութեան այս գաւառի Տէր Ստեփաննոս տղայ համբակի Եւ յառաջնորդութեան մերոյս ուխտի Յակոբ անուն վարդապետի, Սա կրօնաւորք կարգեալ ունի, Համանման սուրբ Անտոնի Որք հաւաքեալ կան այս տեղի Ի դունն սուրբ քաւարանի,

Աղօթել վանս աշխարհի, Եւ ակն ունին Տեսուն վարձի...»:

(Ակինեան Հ. Ն., Հաւար. Յիշատ. էջ-միածին, Գիրք Հարցմանց Գրիգորի Տաթևացոյ, Թ. 917): Գրիգոր Տաթևացոյ գործերէն կը գրուին ՊԿԳ թուին [1414ին] «Ի վանս Սուհարայ» (Macler, Rapport, էջ 6. հմմտ. վերը):

Ինձի այնպէս կը թուի թէ նախ Յակոբ եղած ըլլայ առաջնորդ եւ ապա անոր յաջորդած Կարապետ, վանս զի շատ լաւ կարելի է խորհիլ որ՝ Սառաբաստի վերաշինութիւնը տեղի ունեցած ըլլայ Յակոբ կաթողիկոսի վերջին տարին՝ 1414ին (Քէլչեանի Զմմտութիւն. Զեռ. ցուցակին [անտիպ] Թ. 30 Ձեռագրի համեմատ նա զեռ 1414ին կը յիշուի, թէ եւ իր գահակալութեան վերջին տարին ընդհանրապէս 1411—1412 զրուած է), երբ արդէն մեռած էր Յակոբ առաջնորդը եւ անոր յաջորդած Զաքէոսի ազգականը Կարապետ, որ իր առաջին գործը բրած ըլլայ Սառաբաստի վերաշինութիւնը եւ ապա ուխտի գացած Երուսաղէմ (Աղաւունի, Մխարանք եւ այցելուք հայ Երուսաղէմի, էջ 200—202 եւ Նօտարք, էջ 49—50):

Կարապետի բացակայութեան ատեն Սառաբաստի հէրպետ ու (զուցէ առ ժամանակեայ) առաջնորդ կ'ըլլայ Յովհաննէս վարդապետ, զոր զժրախտարար իր վերադարձին Կարապետ արդէն մեռած կը գտնէ եւ անոր ի յիշատակ, ինչպէս ուրիշ անդարձ մեկնողներու, գրել կու տայ Գր. Տաթևացիի Քարոզիչը՝ «Գրեցաւ ՊԿԳ թուին զիրքս քարոզութեան... ձեռամբ անարհեստ եւ անիմաստ... Յակոբի անարժան, ծոյլ եւ մեղսասէր կրօնաւորի ի յիշատակ եւ ի վայելումն աստուծապարփակ, հոգիւրնկալ եւ երանաշնորհ քաջ բարունապետին եւ տիեզերալոյս վարդապետին Կարապետի...: Այլ եւ գհոգեւոր հայրն իմ գտէր Զաքէոս եպիսկոպոսն որ բազում ջանիւ եւ աշխատութեամբ աշխատեալ է ի յուսուցանել եւ յառաջնորդելն սուրբ ուխտիս...: Արդ գրեցաւ սա ի յերկիրս Քաջբերունի ի սուրբ ուխտս Սառաբաստայ ի հրեշտակարնակ կայանս սրբոց վարդապետաց եւ ճգնաւորաց առաջնոցն ի դրունս սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Մարգարի: Հրամանաւ գիտնական եւ արդիւնական հօտորի Կարապետ վարդապետի ի յիշատակ իւր եւ իւրոցն ամենայնի հարա-

<sup>7</sup> 1393ին գրուած ակտարան մը Թաղէս կը նուիրէ Սառաբաստայ (Նօտարք, էջ 2):  
<sup>8</sup> Երկու տարի վերջ 1393ին՝ «Ի վանս Սուհարայ որ այժմ կոչի Սառաբաստայ... Գրիգոր կ'արտադրէ Աւետարան մը» (Աղգաք. Հանդ., 1897, էջ 281—282):

<sup>9</sup> Յօդուածագիրն այս սխալ տեղեկութիւնը կու տայ՝ «Սուհարու վանք, որ Սուխարու եւ Սառաբաստայ վանք ալ կ'ըսուի եւ սմաթ անապատ կ'ըսեն՝ Ռշտունեաց երկիրն է»:

զատ եղբարցն... Յովհաննէս կրօնաւորի առաջնորդի<sup>10</sup> սուրբ ուխտիս» (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. էջ 2143. հմմտ. Յովսէփեան, Թովմաս Մեծօրհեցու կեանքը, էջ Ը եւ Ժէ) :

Կարապետ ուրիշ անգամ եւս Պառարաստի վանքը կը թողու, բայց ահամայ: Շահուհի եւ Սքանդարի շահատակութիւնները (1436ին) զինքը կը ստիպեն հեռանալ իր սիրած վայրէն (Նօտարք, էջ 108 եւ Յովսէփեան, անդ, էջ Ը, ծն. 1) :

Կարապետ վարդապետ Յովսէփ վարդապետի հետ իր մասնակցութիւնը կը բերէ Կիրակոս Վերապեցւոյ կաթողիկոսական ընտրութեան (Նօտարք, էջ 122. Թովմ. Մեծօրհեցու, Յիշատակարան, էջ 52 եւ 66) : Նորընտիր կաթողիկոսն իր կրթութիւնը ստացած էր Պառարաստի մէջ Սարգիս եւ Վարդան վարդապետներու քով (անդ, էջ 54) եւ կանխաւ Չաքէոս եպիսկոպոսէն քահանայ ձեռնադրուած (անդ, էջ 54. հմմտ. նաեւ Գր. Դարանաղեցի Ժամանակագրութիւն, էջ 312) :

Իզնատիոսի ձեռքով, զուցէ հոս 1443ին, Մաշթոց մը կը գրուի՝ «Ի վանս Ռուխարա ձայնելոյ (կարծեմ կարգալու է Սուխարա) որ այժմ Հեռարարձ կոչի ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տաճարիս եւ սուրբ Ստեփաննոսիս եւ սուրբ Սարգսի... Ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Յ. Վրդապետիս Կարապետի...» (Ազգագր. Հանդ. 1904, էջ 166) :

Երկարատեւ կ'ըլլայ Կարապետի առաջնորդութիւնը: Նա կը յիշուի դեռ 1454ին՝ (հմմտ. դեռ Նօտարք, էջ 77, ծն. 2 եւ էջ 153, 1446ին) :

«Փառք... սմա ցանկացաւ այր ոմն կուսակրօն արեղայ եւ մաքրամիտ կրօնաւոր Կիրակոս անուն եւ ետ գրել... Իզնատիոսի անարժան արեղայի: Եւ արդ յանգ եղեալ կատարեցաւ սա ի թուականութեանս Հայոց 2Գ (1454)... Ի գաւառին Քաջբերունի ի վանս Սուխարայ որ այժմ Պառարաստայ վանք վերածայնի ընդ հովանեաւ հոյակապ բարձրաչէն եւ պայծառաչէն գմբեղարդ եւ հրաշա-

<sup>10</sup> Հաւանորէն այս Յովհաննէսի համար Կարապետ կը կանգնէ խաչքար մը՝ «Ճս Կարապետ վարդապետ կանգնեցի զխաչս բարեխօս առ Աստուած եղբօրն իմոյ Յովհաննէս հերպետի, որք երկրպագանէք յիշեցէք ի Քրիստոս թվ. ՊՂԸ (1449, Նօտարք, էջ 160) : Մոյն Կարապետի օրով 1425ին աւետարան մը կը նուիրուի (Լուսնայ, 1905, էջ 218—219) :

ղեղ սուրբ տաճարիս<sup>11</sup>, որ յանուն ամենասուրբ Աստուածածնին կառուցեալ կայ յառաջնորդութիւն սուրբ ուխտիս առ ոսոս երջանիկ եւ հեղահոգի վարդապետի ամենազով եւ հանձարեղ, իմաստուն եւ արդիւնաւոր Կարապետ բարունապետի: Արդ զբեցաւ սա ի վերոյ ասացեալ սուրբ ուխտն...» (Նօտարք, էջ 174—176) :

Յայտնաւորքի մը յիշատակարանին մէջ (գրուած 1457ին) կ'ըսուի թէ այն ընդարձակ դրքի մէկ մասն ալ Սուխարայ վանքի մէջ արտագրուած է (Աճառեան, Յուզ. հայ. Ձեռ. Թաւրիղի, էջ 103) :

Տարիներ վերջ վանքիս առաջնորդ կը յիշատակուի Յովհաննէս վարդապետ: «Չաքէոս կրօնաւոր Արծուարեր Աստուածածնի ուխտէն, օժանդակութեամբ առաջնորդաց սուրբ աթոռոյս Յովհաննէս իմաստուն վարդապետի եւ տէր Յովհաննէս արհիպիսկոպոսի Քաջբերունեաց<sup>12</sup>» 1469ին կը ստանայ Շարակնոց մը (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. շ. Պոտուրեանէ) :

Սուխարայի մէջ 1471ին Աւետարան մը եւ 1473ին Մաշթոցէ մաս մը կ'արտագրուի (Անդ) : Իսկ 1513ին «յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Ստեփաննոս եպիսկոպոսի» Կարապետ կրօնաւոր կը գրէ Գրիգոր Տաթևացիի քարոզարարքը եւ կը յիշէ Ղուկաս հետտորը (Macler, Rapport..., էջ 181—182) :

Ապա 1530ին գրուած Մաշթոցի մը մէջ կը մաղթուի յիշել՝ «Չառարաստայ վանից առաջնորդին զՄարգար(այ) վարդապետն եւ զՍտեփաննոս եպիսկոպոսն եւ զԿարապետն» (Ակինեան Յ. Ն., Հաւաք. Յիշատ. էջ 962) : Իսկ Մարգար արեղան 1531ին կ'արտագրէ Պառարաստի մէջ Սաղմոսարան մը (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. շ. Պոտուրեանէ եւ Փիլղոլէմեանէ) : Քանի մը տարի վերջ 1534ին կը գրուի Սաղմոսարան՝ «Ի յերկիրս Քաջբերունոյ ի վանս Սուխարայ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տաճարիս յառաջնորդութեան սուրբ ուխտիս Կարապետ եպիսկոպոսի եւ Ստեփաննոս եպիսկոպոսի եւ Մարգարայ վարդապետի» (Հան-

<sup>11</sup> «Յեա Աղթամարայ սա շքնաղ եւ պայծառապոյն է շինութեամբ ի մէջ վանքից երկրին մերոյ Շամիրակերտին վանայ» (Նօտարք, էջ 174, ծն. 2) :  
<sup>12</sup> Նոյն անձերը կը յիշուին 1466ին գրուած Աւետարանի մը յիշատակագրութեան մէջ ալ (Ազգագր. Հանդ., 1897, էջ 287) :

դէս Ամսօրեայ, 1915, էջ 33. հմմտ. եւ Լուսնայ, 1900, Ա., էջ 265—266) : Երկու տարի յետոյ (1536ին) միեւնոյն տեղը կը գրուի Հաւաքունի բանից նախնեաց՝ «Ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Մարգարայ վարդապետին եւ տէր Ստեփաննոս արհիպիսկոպոսին եւ տէր Կարապետ հէրպետին (Սարգիսեան, Մայր ցուցակ, Բ., էջ 1097) : Ասկէ վերջ, զաղար մը տեղի կ'ունենայ. 1573ին կազմուած աւետարանի մը մէկ մասն ալ Պառարաստի վանքի մէջ կը գրուի (Լալայեանց, Յուզ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 678—680) :

Տիրատուր արեղայ 1578ին կ'արտագրէ աւետարան մը՝ «Ի յերկիրս Քաջբերունոյ, որ կոչի Արձէշ ի սուրբ ուխտս Սուխար թաղաւորի, որ այժմ Պառարաստու վանք վերածայնի, ընդ հովանեաւ Արծուարեր սուրբ Աստուածածնին ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Մինաս եպիսկոպոսին... զբեցաւ ի ինդրոյ տէր Գրիգորին... ընդ նմին անարժան Յակոբ եպիսկոպոս յիշեցէք» (Հանդէս Ամսօրեայ, 1925, էջ 472) :

Քանի մը տարի վերջ Աւետարանի մը յիշատակարանի մէջ (գրուած 1585ին) կը կարդանք.

«Արդ ես Կարապետ սուտանուն եպիսկոպոս նորոգեցի եւ կազմեցի սուրբ աւետարանս ի յերկիրս Քաջբերունոյ, որ է Արձէշ ի վանքս Սուխար թաղաւորի որ այժմ Պառարաստայ վանք վերածայնի ընդ հովանեաւ Արծուարեր սուրբ Աստուածածնի ի հայրապետութեան տեսնն սուրբ էջմիածնայ տէր Գրիգոր կաթողիկոսի եւ ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Մինաս եպիսկոպոսի... : Եւ ես Կարապետ սուտանուն եպիսկոպոս ի նեղ եւ ի դառն ժամանակիս նորոգեցի եւ կազմեցի սուրբ աւետարանս. յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք հոգւոյ իմոյ եւ ծնողաց իմոյ Գիւլամերին եւ մօրն Սայիպ Սուլթանին եւ վարդապետին իմոյ քաջ քարտուղարին տէր Աստուածատրուն... Ի թվականիս Հայոց ՌՂԳ» (Սմբատեան, Գեղարքունիք, էջ 49) :

Անկէ վերջ լուծութիւնը խոր է : Ուժեղ հարուած մը Սուխարայ վանքի կենսունակութիւնը կարկամեցուցած եւ զաղբեցուցած է<sup>13</sup> :

<sup>13</sup> Վերջին շրջաններու վանահայրներէն է Սողոմոն, որ Գէլեքէշէշ կոչուած է (Նօտարք, էջ 32. Շէրենց, Սրբավայրեր, էջ 90—91) :

Պառարաստայ վանքը Մեծօրհայ վանքէն վերջ Քաջբերունեաց ամէնէն անուանի վանքը հանդիսացած է եւ ներկայացած դիտութեան ու զարգացումի կենդրոն : Ժողովուրդը զնահատելով անոր ընտիր գործունէութիւնը զայն օժտած է ընդարձակ վարելահողերով եւ արտերով, որոնցմէ մասի մըն ալ հաւանորէն տիրացած ըլլայ իր առաջնորդներու եւ միաբաններու լաւ մտտակարարութեամբն ու խոհականութեամբը : Անոր կը պատկանէին Սօսկուն եւ Կըտրած քար դիւղերը եւ ուրիշ հողեր (հմմտ. վերը՝ Վերաշինութիւն Պառարաստայ, Շէրենց, Սրբավայրեր, էջ 90—91, Աշխատանք, 1911, էջ 765) : Դժբախտաբար 1896ին կողպուտի կ'ենթարկուի :

5. ԱՐՁՕՆԻՑ ԿԱՄ ԱՌՁԵՒԻՑ ԿԱՄ ԱՌԱՋՈՒՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԿԱՄ ՀԱՒԱՏԱՒՈՐ Ս. ԳԵՈՐԳԻ ՎԱՆՔԸ

Կը դառնուի «ընդ մէջ Մեծօրհայ եւ Սիւրբան լերին» (Սարգիսեան, Տեղադրութիւնք, էջ 269), Ականց աւանէն չորս հինգ ժամ հեռու<sup>14</sup> (Արեւելք, 1890, Թ. 1820) : Շէրենց կը գրէ՝ «Ծաղկանց լերան հարաւային շղթաներից միոյն լանջին վրայ, առապարով ընկած ճանապարհի աջ կողմում կառուցվել է Առջեւից կամ Առաջուց վանք յանուն սուրբ Աստուածածնի : Դրա հիմնարկութեան մասին լսել ենք որ՝ Քաջբերունեաց երկրում առաջին անգամ հիմնարկեալ վանքն է եղել եւ դորա ապացոյցն վանքի ամենահնաչէն տաճարն, խուլ ու մթին դարպասն են, որոնք արդարեւ թէ իւրեանց հնաճեւ յատակադրածով, տարբեր շինուած քովն տարբերվում են միւս վանքերի շինուած ձեւերից եւ դարերի ընթացքում այդպէս կանգուն մնացած, որպէս յուշարձաններ, հազիւ հազիւ սկսուել են մաշուել եւ բեկորներ թողնել թէ տաճարի եւ թէ դաւթի որմերից» (Շէրենց, Սրբավայրեր, էջ 94) :

«Նօտարք»ի հեղինակը (հմմտ. վարը) շատ հաւանական կը գտնէ որ այս նոյն է Հաւատարար Ս. Գէորգի հետ : Լաւ ըրած կ'ըլլար եթէ իր վարկածն ապացուցած ըլլար : Գուցէ այս մտքին եկած ըլլայ Ս. Գէորգ եկեղեցւոյ յիշատակութիւնէն (հմմտ. վարը) :

Աւանդութիւնը Արջոնից վանքը Վասպուրականի ամէնէն հին վանքերէն կը հա-

<sup>14</sup> Արմիղոնք գիւղի հարաւակողմը (Բնաշխ. Բաւարան, էջ 324. հմմտ. Մանանայ, էջ 57) :

մարի (Համառ. վերջ), մինչ զրաւոր տեղե-  
կութիւններ կը պահուին:

Հոս 1340ին կը գրուի ձաշոց մը՝ «Գրե-  
ցաւ ձեռամբ յիմար եւ փցուն զրչի Սարգսի-  
ի թուականութեանս Հայոց 22թ (1340) ի  
վանս Աջաւնից ընդ հովանեաւ սուրբ խորա-  
նիս քաջ եւ յաղթող սուրբ Գէորգեա ի յա-  
ռաջնորդութիւն սուրբ ուխտիս Կիրակոսի եւ  
Սիմէոնի երջանիկ եւ սուրբ կրանաւորի...  
եւ զաղաչանս մեր ընկալ եւ զընկերակիցս  
մեր աւրհնեա, որ եմք ի մի ուխտի վա-  
նաց... զԿիրակոս... առաջնորդ մեր եւ զՍի-  
մէոն կրանաւոր... զՍաշիկ եւ զՎարդան,  
որ ձայնին հնչման գովեն զորդին Աստուծոյ,  
զՅակոբ խոնարհ եւ զՅոհանէս ժրջան,  
զԱւետիս աւետեաւք լցեալ, զԿիրակ(ոս)  
զսպասաւոր եկեղեցոյս մերոյ. զՊետրոս»  
(Արարատ, 1915, էջ 69):

Գար մը վերջ 1449ին թուամաս Մեծոփեցի  
հոս կ'արտադրէ աւետարան մը՝ «... Գրե-  
ցաւ ի յերկիրս Քաջբերունի, ի սուրբ ուխտս  
որ կ'ըչի Արջոնից վանք<sup>15</sup> ընդ հովանեաւ  
սուրբ Գէորգայ զորավարիս եւ այլ սրբոցն որ  
աստ կան հաւաքեալ, եւ ի հայրապետու-  
թեան Տեանն Գրիգորի սուրբ էջմիածնի եւ  
ի թագաւորութեան Ջհանչին որդի Ուսու-  
փին, որ տիրեաց աշխարհիս Հայոց եւ Ասոր-  
ւոց... ի թուականութեանս մեր ՊՂԸ  
(1449)...» (Նոտարք, էջ 162):

Ետքէն 1460ին կը գրուի Աւետարան մը՝  
որուն յիշատակարանին մէջ կ'ըսուի՝

«Փառք... Եւ արդ զրեցաւ սա (Աւետա-  
րան) ի քաղաքս Արծկէ ընդ հովանեաւ սուրբ  
Աստուածածնի տաճարին եւ Նախափկայ սուրբ  
Ստեփաննոսի եւ Գէորգայ զորավարին ձե-  
ռամբ յոգնամեղ զրչի Միքայէլ սուտանուն  
քահանայի ի թուականութեանս Հայոց 2թ  
(1460) ի հայրապետութեան Տեանն Գրիգորի  
եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս Արան-  
չելագործի Մինաս արհիեպիսկոսոսի: Եւ  
արդ ես ամենամեղ Ստեփաննոս ետու զծա-  
ղրել զսուրբ աւետարանս ի խոնջացեալ  
քրտանց եւ ի հարլալ արդեանց իմոց եւ ետու  
գաս ընծայ եւ նուէր Հաւատաւորի անապատի  
սուրբ Գէորգայ երկնանման տաճարիս ի յա-  
ռաջնորդութիւն սուրբ ուխտիս Մարուգէ  
ձգնաւորին, որ շատ չարչարեցաւ եւ շինեաց  
զսուրբ ուխտս ի կորդէ եւ զսուրբ Գէորգ զո-

<sup>15</sup> «Կայ շին եւ կանգուն սուրբ ուխտս ի մէջ Ծայ-  
ձակ (Ծակծակ) եւ Ջրետիկայի գեղորէից մինչեւ ցայ-  
սօր ժամանակի» (Նոտարք, էջ 162, ծն. 2):

րավարս, տացէ Տէր Աստուած զանձեռա-  
գործ խորանն եւ զերկնից արքայութիւն իւր  
եւ ծնողաց իւրոց եւ Ստեփաննոս միակեցին՝  
որ ստացողն է սուրբ աւետարանիս ամէն:  
Եւ ես Ստեփաննոս ետու զսուրբ աւետարանս  
Հաւատաւորի վանաց՝ զրան սուրբ Գէորգայ  
զորավարին...» (Նոտարք, էջ 196 ուր հե-  
ղինակը սա ծանօթութիւնն ունի՝ «Ինձ յոյժ  
հաւանական երեւի թէ սոյն սուրբ Գէորգ  
ուխտն նա է որ այժմ կ'ըչի Արջոնից  
վանք...»<sup>16</sup>):

Մենաստանս ունեցած է լայնատարած  
հող, մարդապետին, այգի, ջրաղացք եւ քանի  
մը զիւղեր՝ Ծակծակ, ձուլթղայ, Արմիղանք  
(Արեւելք, 1890, թ. 1820, ուր կը յիշուի  
ժամանակակից վանահայրը՝ Սորէն քահա-  
նան): Վերջին վանահայրներն եղած են ժա-  
ռանգարար եւ վանահայր քահանաներու<sup>17</sup>  
որդիներու մէջ բաժնուած են հողերը (Շէ-  
րենց, Սրբափայրեր, էջ 95, եւ Աշխատանք,  
1911, էջ 765), 1895—1896ի զէպքերը վան-  
քիս համար ալ աղետարեր կ'ըլլան:

6. ԳԻՆԵՐԵՐ Ս. ՆՇԱՆԻ ԿԱՄ ԿԵՆԱՔԵՐ Ս. ԳԵՈՐԳԻ  
ԿԱՄ ԿԵՆԱՓՈՐԻ ՎԱՆՔԸ

Ականց զիւղաքաղաքէն չորս ժամ հեռո-  
ղեկեցիկ բլուրի մը վրայ շինուած է Գիներեր  
Ս. Նշանի կամ Կենարեր Ս. Գէորգի կամ Կե-  
նափորի վանքը: Հ. Սարգիսեան կը սահմա-  
նադէ՝ «Յարեւմտակողմն զաշտին Արծիշոյ,  
արտաքոյ նորին կան անշուք մենաստանքն  
Կենափորի եւ Արջոնից, ընդ մէջ Մեծոփայ եւ  
Սիփան լեռին» (Տեղագրութիւնք, էջ 269):  
Իսկ Շէրենց կը գրէ՝ «Քաջբերունեաց դա-  
ւառի Գանձակ զիւղի շրջակայ այգիներէ  
վերեւ շրջապատուած որթատունկ այգիներ-  
րով կառուցուել է համանուն Գանձակայ Կե-  
նարեր վանքը» (Սրբափայրեր, էջ 93):

Կենարերի շուրջը կան աւերակներու կոյ-  
տեր եւ խոնարհած խաչքարեր-կարձեւ ա-  
պացոյց երբեմնի ետուն կեանքի: Ունեցած է  
ընդարձակ հող, զոր օդտապործեր է Գանձա-  
կեցի զիւղացի մը: Վանահայրերը զայն շա-  
հապործութեան աղբիւր բրած են: Ան ալ

<sup>16</sup> «Ի ՋՂԳ թվականին» Շարահնոց մը «աւարտե-  
ցաւ... ի բարձրագիտակ անջրդի անապատս Արջոնի»  
ընդ հովանեաւ Կենարեր Սուրբ Աստուածածնին»  
(Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. ի Պարիս, սեպտե-  
կանութիւն է ձեռագիրը Պր. Տիգ. Սրապեանի):  
<sup>17</sup> Ծանօթ է իբրեւ ձիափարժ Յակոբ վանահայրը  
(Սրուանձեւանց, Մանանայ, էջ 57):

1895—1896ի զէպքերուն աւերումի կ'ենթար-  
կուի եւ 1909ին էմին փաշան անոր զմբէթն  
ու տաճարը քար ու քանդ կ'ընէ (Արեւելք,  
1890, թ. 1820. Բիւզանդիոն, 1900, թ. 1127.  
նոյնը 1909, թ. 3773. Աշխատանք, 1911,  
էջ 765. Համառ. նաեւ Էփրիկեան, Բնաշխ.  
Բառարան, էջ 528):

7. ԿԵՐՄԱՆԻՑ ՎԱՆՔԸ

Քաջբերունեաց դաւառի համանուն զիւ-  
ղին մէջ բարձրացած էր Կերմանից վանքը,  
ուր ժամանակ մը բնակած է անուանին Մխի-  
թար Սասնեցի (Համառ. Մեծոփայ վանքը,  
Տաշեան, Մայր ցուց., էջ 544 եւ Էփրիկեան,  
Բնաշխ. Բառարան, Բ., էջ 385):

8. ԿՈՂՈՒՅ ԵՒ ԿՈՃԵՐԱՅ ՎԱՆՔԵՐԸ

Հաւանականաբար Արծկէի մէջ կը գտ-  
նուի Կողուց վանքը, զոր Պալեան Շապին  
Գարահիսարի մօտ կը գնէ եւ որուն սակայն  
կը հակառակի Սահակեան (Բիւզանդիոն,  
1900, թ. 1056, 1091 եւ 1127): Հոս քանի  
մը արտադրութիւններ կ'ըլլան (Նոտարք,  
էջ 198. Տաշեան, Մայր ցուց., էջ 583, ուր  
կը յիշուին առաջնորդ ու միարաններ. Համառ.  
եւ Հանդ. Ամս., 1939, էջ 187):

Գանձարան մը 1412ին կը գրուի՝ «Ի դա-  
ւառիս Արծրունեաց ի վանքս Կոճերաց ընդ  
հովանեաւ սուրբ ծովահայեաց Աստուածա-  
նիս եւ այլ հաւաքեալ նշխարաց սոցա: Աս  
սոս Յովհաննէս վարդապետի եւ առաջնորդ  
սուրբ ուխտի» (Conybeare, Cat. Brit., էջ 120):  
Հայր Սարգիսեան իր «Տեղագրութիւնք» ի  
Քարաշտին մէջ (էջ 250—251) Կոճեր անուն  
վայր մը կը յիշէ Բզնունեաց ծովի եզերքը,  
Ստանցէն վար: Գուցէ անոր վանքն է յիշա-  
տակագրութեանս մէջ ակնարկուածը: Կո-  
ճերի քով Հ. Սարգիսեան (Համառ. անդ)  
գրած է Աւեր վանքը:

9. ԶՈՐՈՑ ՎԱՆՔԸ

Զորոյ վանքին անունը ծանօթ է յիշատա-  
կարանէ մը, ուր ընդհանուրն կ'ըսուի թէ՝  
Քաջբերունեաց դաւառին<sup>18</sup> մէջ է, առանց  
որոշ տեղը նշանակելու. «Արդ զրեցաւ սուրբ  
աւետարանս ի դաւառս Քաջբերունեաց, ի

<sup>18</sup> Չեմ կարծեր որ՝ Վան-Տոսպի Զորոյ վանքը  
չփոթութեամբ Քաջբերունեաց դաւառի մէջ նշանա-  
կուած ըլլայ:

յանապատս որ կոչի Զորոյ վանք, ընդ հովա-  
նեաւ սուրբ Աստուածածնիս եւ կեանսարեր  
սուրբ Նշանիս, ի հայրապետութեան Տեանն  
Գրիգորի սուրբ էջմիածնի եւ ի թուականու-  
թեանս մերոց ՊՂԸ» (1449): Գրիչն է թուաց  
կրօնաւորը եւ կը գրէ Հերապետ կրօնաւորի  
համար (Սարգիսեան, Մայր ցուց. Ձեռ. ի  
Վենետ., Ա. հար., էջ 691):

10. ՄԱՆՈՒԿ Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔԸ

ՊՍԱ. թուին (1392) աւետարան մը կը  
գրուի՝ «Յերկիրս Քաջբերունոյ ի յանա-  
պատս, որ Մանուկ Ս. Նշան կոչի» (Թօփ-  
ձեան, Յուց. հայ. Ձեռ. Գագեան Վրդ. ի,  
էջ 53): Գուցէ նոյն Գիներեր Ս. Նշանի կամ  
Ուրընկայ Ս. Նշանի հետ (Համառ. անդ):

11. ՄԱՍՂԱՅ ՎԱՆՔԸ

Հ. Սարգիսեան կը գրէ՝ «Մատղավանք  
յարեւելից Արծիշոյ, յեզր ծովուն, մենաս-  
տան աւերակ եւ օձուտ. եկեղեցին զեղեցիկա-  
չէն կանգուն կայ, բայց ոչ աներկեան յա-  
լեացն յարձակմանէ, որ զսա կլանել հանդեր-  
ձեալ են» (Տեղագրութիւնք, էջ 269): Աւե-  
տարան մը կ'աւարտի՝ «Ի թվականիս 246  
(1516) ամին ի դաւառս Քաջբերունի, ի  
զիւղս Մատղայ վանք, ընդ հովանեաւ սուրբ  
Ստեփանոսի» (Սմբատեան, Նկարապիւր Երն-  
ջակայ սուրբ Կարապետի վանից եւ շրջա-  
կայից նորին, Տիփսիս 1906, էջ 251): Գարեր  
ետքը 1884ին վանահայրական տեղապահ էր  
այս տեղ վարդան Արծկեցին (Արեւելք, 1884,  
թ. 214): Անկէ տասնութէկ տարի վերջը —  
1895ին — թալանուածի կ'ենթարկուի (Արա-  
րատ, 1896, էջ 89):

12. ՄԵՏՈՓԱՅ ՎԱՆՔԸ ԿԱՄ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ  
ՎԱՆՔԸ

«Քաջբերունեաց դաւառի հիւսիսա-  
կողմն, Ծաղկանց լեռան հարաւային ձախ  
թեւին տակ, թագնուած երկու միմեանց մօտ  
կիրճերում կառուցվել է Մեծոփայ վանքը,  
ոչ պակաս հնութեամբ Արծուաբերից. փոք-  
րիկ, բայց կոկիկ շէնքերով» (Շէրենց, Սրբա-  
փայրեր, էջ 91): Կամ ուրիշ խօսքերով վանքս  
կը գտնուի՝ «Յերկիրն Աղիովտայ, որ կայ ի  
հիւսիսային կողմանէ Ականց զիւղաքաղաքին  
մերձ ի զիւղն Յարութիւն» (Նոտարք, էջ 12,  
ծն. 2): Դժբախտաբար ան չունի տարածու-

Թիւն ու տեսարան, որովհետեւ հիմնարկուած է սրածայր լեռներու ստորտը գտնուող կիրճերուն մէջ, որոնք բաւական արգելքներ են լայնածաւալ հորիզոններու:

Շէրենցի համեմատ՝ «Մեծոփ անունն առնուած է վանքի վերեւում գտնուած փոքրիկ լճակի ուր յորջորջուած էր» (Սրբավայրեր, էջ 91): Արդէն Հ. Մարգարեան (Տեղագրութիւնք, էջ 267) եւ Հ. Ինճիճեան (Նոր Հայաստան, էջ 166) կը հաւաստեն թէ՛ վանքս Մեծոփ կոչուած է իր մօտ գտնուած մեծ փոսի մը, մեծ ուրի մը, պատճառով, որուն մէջ առատ ջուր կը հաւաքուի եղեր, վասն զի թումբերով պարփակուած էր: Այժմ այդ թումբերը քակուած են եւ ջուրը կ'երթայ կը թափի Վանայ ծովակը<sup>19</sup>: Հ. Չամչեանի (Պատմ. Հայոց, Գ., էջ 167, ցանկ) խօսքերուն վրայէն՝ «Մեծորայ վանք, որ է մեծ յոր» Saint-Martin (Mémoires, II, էջ 465) կը գրէ՝ «Medzopa, c'est-à-dire, le grand Job...»: Մեր Մատենադարանի Թ. 607 Ձևագիր Կանոնագրքին մէջ կայ՝ «Ի հրեշտակարանակ սուրբ ուխտիս Մեծորայնաց (անդ, Թղ. 205բ):

Դժբախտաբար Մեծոփայ հոչակաւոր վանքին չէնքերու մասին շատ գոյգն են եղած տեղեկութիւնները եւ չէ կարելի անոր նոյն իսկ բաւարար նկարագրութիւնն ընել: Հ. Մարգարեան կը գրէ՝ «Շինուած մենաստանին ըստ օրինակի այլոց անշուք միջին եւ խրթին, եկեղեցեան եւեթ թերեւս անուանի գտաւ ի նախնեաց եւ այսր, ժամատամբ եւ տաճարաւ բովանդակեալ եւ գմբեթաչէն: Ի կամարս եկեղեցւոյն են գաղանի դարանք, ի նոսա թերեւս ամբարեալ կային զըջագիրքն, զորոց գրեալ կայ ի կոնդակին վանացն եւ ցայսօր իսկ գովութեամբ հոչակի ի սամկաց<sup>20</sup>» (Տեղագրութիւնք, էջ 267. հմմտ. եւ Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 167): «Նոր Դար»-ի (1893, Թ. 145) մէջ կը գտնենք սա նկարագրութիւնը՝ (Մեծոփայ վանքը) «Շինուած է կոփածոյ քարից, ներքուստ եւ արտաքուստ ունի փորագրուած

<sup>19</sup> Լեռնեան կը հակառակի Արեւելք թերթին մէջ տրուած «Մըքնայ» ստուգարանութեան եւ ճիշդ կը համարի «Մեծոփ» այս է՝ մեծ փոս, «զի վանքը խորունկ եւ լայնեկ փոսի մը կենդրոն շինուած է» (Բիւզանդիոն, 1900, Թ. 1196):  
<sup>20</sup> Կ'աւանդուի թէ վանհայրը Լէնիթիմուրի մահամբձ որդին բժշկած ԸԼԿայ եւ 65 բնո զըջագիր ստացած շնորհակալութեան ցոյցի համար:

խաչքարեր եւ արձանագրութիւններ, որոնց ցոյց տալով այդ վանքը շինուած է ՌՃԻ Թուին: Ներքուստ գեղեցիկ եւ հաստատուն տաճար է... իսկ արտաքուստ գմբեթն ամբողջովին քայքայուած, պատերի քարերը թափուած, կտուրը քայքայուած եւ ամբողջովին աւերակ դարձած»:

Եկեղեցին նուիրուած է Մօրն Լուսոյ սուրբ Աստուածածնի եւ ունի երկու մատուռ, որոնցմէ մէկը Ս. Յակոբի ընծայուած: Չայն վերաշինած է 1409ին Յովհաննէս վարդապետ եօթը տարւոյ ընթացքին մէջ եւ անոր հիմնաքարը բերած Չաղաթայ բնաւորը (հմմտ. Թովմ. Մեծոփ., էջ 52 եւ Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 127): Եկեղեցւոյ արեւմտեան կողմը՝ որմի վրայ կայ այս արձանագրութիւնը, զոր Փերդալէմեան 1860ին կարդացեր է (հմմտ. Նօտարք, էջ 30—31 ուր ուրիշ արձանագրութիւն մը 1432էն էջ 99)՝ «Թուին ՊԾԸ եւ Յովհաննէս վարդապետս վերջինս եկեղեցւոյ եւ առաջնորդ աստուածաբնակ սուրբ ուխտիս Մեծոփայ՝ միարանութեամբ ամենայն եղբարցս սպաստան եղեալ ի նոյն, որ զօրացոյց գտկարս, ձեռն ի դործ արկեալ շինեցաք զսուրբ տաճարս Մարիամայ Աստուածածնին, յիշատակ հոգւոյ խմոյ մեղապարտի եւ ծնողացս կրկնակի եւ որք մասն ինչ արոց նուիրեալ են ի սուրբ եկեղեցիս: Արդ յերես անկեալ պաղատիմ մանկանցդ սուրբ Սիովիլի, որք ընծայէք զսուրբ հացն կենաց յիշեսջիք գմեղ առաջի անմահ գառինն Յիսուսի Քրիստոսի, զի եւ ձեզ յիշողացդ եւ մեզ յուսացողացս եւ համօրէն միարանիցս առ հասարակ աշխատաւորացս ողորմեսցի Քրիստոս Աստուած: Ի կաթողիկոսութեան տէր Յակոբին, ի վարդապետութեան քաջ հեռորին Գրիգորի Տաթեւացւոյն, յորմէ ազատեցաք ի կապանաց եւ անիծիցն Աղթամարայ: Ի բոնակալութեան Լանկթամուրին հիմնարկեցաւ եւ ի պարոնութեան (Ղարայ Ուսուֆին) աւարտեցաւ ձեռամբ ութայ Ծարածին, Ատոմին, Սիրունին, Դաւթին, Տիրատրուն, Մկրտչին, Յովաննէսին, Յովսէփին, Ղազարին, Ատոմին, Մարտիրոսին, Չաքարբէկին, Կիրակոսին եւ այլ ամենայն աշակերտաց նոցին»:

Հայկունի եկեղեցւոյ հարաւային պատին վրայ տեսած է ու կարդացած՝ «Անուամբ անեղին... եւ Յովհաննէս վարդապետ... առաջնորդ ուխտիս... շինեցաք զսուրբ տա-

ձարս ի յիշատակ հոգւոյ խմոյ... ի կաթողիկոսութեան տեսան Յակոբայ եւ ի վարդապետութեան հեռորին Գրիգորի, յորում ազատեցաք ի կապանաց անիծիցն Աղթամարայ: Ի բոնակալութեան Թէմուրին հիմնուեցաւ. ի պարոնութեան Իւսուֆի աւարտեցաւ թւին ՊԾԸ» (Աշխատանք, 1911, էջ 779):

Վանքին հանդէպ «ի կողաց լերին» կը գտնուի անոր գերեզմանատունը, ուր ամփոփուած են միարաններու մարմինները՝ արձանագրութիւններով օժտուած: Դժբախտաբար չէ եղած փութաշան անձ մը, որ զանոնք հաւաքէր եւ տպագրութեամբ հանրութեան տացուածք ընէր: Հոն թաղուած են Թովմաս Մեծօփեցի, Պօղոս եպիսկոպոս, Մխիթար Սասնեցի եւ Ստեփանոս նահատակ (Մարգարեան, Տեղագրութիւնք, էջ 267—268 եւ Նոր Դար, 1893, էջ 145):

Մեծոփայ վանքի հիմնադիրն ու անոր հիմնարկութեան թուականն ու պարագաները կը մնան անձանօթ: Ստոյգ է որ առաքելաչէն եւ լուսաւորչաչէն չէ եղած: Նաեւ ստոյգ է որ 1201էն յառաջ արդէն գոյութիւն ունէր եւ Աստուածատուր Արճիշեցին, որուն գերեզմանը կը ցուցուի Մեծոփայ գերեզմանոցին մէջ, կը շինէ Ս. Աստուածածնի եկեղեցին: Աւելեւ Տոսպացին կը գրէ՝ «Ո՞՞ (1201) Մեռելարոց Աստուածատուր վարդապետն Արճիշեցի շինէ սուրբ Աստուածածին եկեղեցին, կենդանացուցանէ զմեռեալ պարսիկն, զոր խեղդեալ էին ընկերակիցքն իւր առ ի զրպարտելոյ զմիարանն Մեծոփայ եւ ազա վախճանեալ թաղի ի նոյն մենաստան» (Դիւան, Ժ., էջ 492):

Մեծոփայ վանքին շարունակական ու ստոյգ պատմութիւնը կը սկսի ԺԴ դարուն եւ դարեր երկար կը տեւէ: Սակայն այն պարագան որ արդէն այդ դարուն ծագեցած շրջան մը կը բոլորէ, ենթադրելի կու տայ թէ կամ շատոնց գոյութիւն ունէր եւ կամ աւելի ճիշդը լաւ ու յաջող ձեռքեր կրցած են զայն կարճ ժամանակի մէջ բարձրացնել:

«Ի վանս Մեծոփայ ձեռամբ Մարգարեայ ըրեղայի» 1311ին<sup>21</sup> կը գրուի Աւետարան մը, որ կոչուած է Կարմիր Աւետարան (Բիւզանդիոն, 1904, Թ. 2289): Արդ շրջաններուն

<sup>21</sup> 1302ին գրուած Աւետարան մը կը տրուի նուէր Մեծոփայ վանքին, ուսկէ սակայն կը գողցուի եւ սակայն յետոյ Մարգարեայ արեգան զայն կը գնէ ու տեղը կը վերադարձնէ (Մարտեան, Երնջակ, էջ 233—234):

Մեծոփայ անուանի միարաններէն է Մխիթար Սասնեցի, որ դրուատուած է իբրեւ «աստուածաշնորհ եւ բանիրուն վարդապետ» ու «քաջ հեռոր Հայոց»: Սասուն գաւառին մէջ ծնած ըլլալուն կոչուած է «Սասնեցի» եւ կերմանց գիւղի մէջ ընակելուն համար «Կերմանցի»: Հաւանօրէն 1260ին ծնած ըլլալու է: Քահանայական ձեռնադրութիւնը Քաջբերունեաց Պաշտուր եպիսկոպոսէն կ'ընդունի: Եղեր է «վարժ յարուեստս զըջութեան եւ ի ծաղկազարդ նկարակերտութիւնս զրոց»: Գրած է 15 ձառ եւ Յովհաննու կաթ. թղթերու եւ Հանգստեան մեկնութիւնները: Այլ եւ այլ վայրեր շրջելէ յետոյ կը բնակի Մեծոփի մէջ<sup>22</sup> եւ 1337ին կը մեռնի բարի համբաւ ձգելով աշխարհի վրայ: Անոր մարմինը «եղեալ կայ ի նոյն վանս Մեծոփայ ընդ հասարակաց գերեզմանս, որ ի հարաւոյ կողմանէ անապատին» (Արարատ, 1899, էջ 167)<sup>23</sup>: Մեծօփի մէջ եւ այլուր Մխիթար բաւական թուով աշակերտութիւն ունեցած է եւ զըջագրութեամբ զբաղած: Իր աշակերտներէն է Դանիէլ Մեծօփեցին, որ գրած է «Բան գովեստի սրբակեաց վարուցն առաքելութեան գովելի տոն Աստուծոյ Մխիթարայ վարդապետի<sup>24</sup>» (հմմտ. Տաշեան, Մայր Յուր. Ձեռ. Մխիթ. Մատ., էջ 75, 539 եւն): Դանիէլին աշակերտակից եղեր է Մկրտիչ Մեծօփեցին, որ հեղինակած է՝ «Պատմութիւն հաւաստի եւ համաօտ Մխիթար վարդապետին», որուն վերջերը կը մտադրէ յիշել «ՂՍտեփաննոս վարդապետ զհոգեւոր հարապատ նորին» (Արարատ, 1899, էջ 167): Մխիթարի<sup>25</sup> արտագրութիւններէն կը յիշենք միայն երկու հատ. 1307ին կ'աւարտի աւետարան մը՝ «Յանապատիս Մեծոփայ վանք առձայնելոյ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս յառաջնորդութեան սրբազան եւ պա-

<sup>22</sup> «Եւ բնակութիւն իւր արարեալ զգեղեցկացեաց եւ զաստուածաբնակ անապատն, որոց անունն Մեծօփայ վանս սոճայնիւր եւ անդ զաղարեալ զամենայն աւուրս կենաց իւրոց» (Արարատ, 1899, էջ 167): — Մեծօփայ «յուսագարգ» անապատի մէջ Մխիթարի ձառերը կ'ամփոփէ Գրիգոր վարդապետ (հմմտ. անդ):  
<sup>23</sup> Յովսէփեանի (Գ. վրդ.) այս յօդուածը սպա արտատպուած է իբրեւ զըբոյղ: Այս գրութեան մասին Հ. Տաշեան ունի զբախտալիկ մը (հմմտ. Հանդէս Ամսօրեաց, 1899, էջ 378):  
<sup>24</sup> Աւելեւ Տոսպացի կը գրէ՝ «222 (1337) Սասնեցի Մխիթար վարդապետն վախճանի ի վանս Մեծօփայ ըստ ազանատեան վկայութեան Դանիէլ հեռորի ճգնաւորի, որ ճոխմատ քանիւ ի գիր էառ զսխարլի վարս մեծ բարունապետին պնտրիկ» (Դիւան, Ժ., էջ 494. հմմտ. Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 127):  
<sup>25</sup> 1443ին իրեն համար կը կանդնուի խաչարձան մը (Նօտարք, էջ 130):



մաս սերտ բարեկամութիւն մշակած էր Յակոբ Ղրիմեցիի հետ, որ ի խնդրոյ Թովմայի վարդապետի հրեշտակարանակ սուրբ ուխտիս Մեծոփայ վանաց կը գրէ՝ «Յաղագս ազգաբանութեանց բաժանման» (համառ. ի մէջ այլոց Տաշեան, Մայր ցուց., էջ 623 եւ էջ 946. ուր «Այլ եւ կանոնք Յակովբայ Ղրիմեցոյն արարեալ ի խնդրոյ Թովմայի հրեշտակարան վարդապետի սրբոյ ուխտին Մեծոփայ յաղագս պսակի ամուսնացելոց եւ ճիւղազրուութեան» (համառ. եւ Նոտարք, էջ 158—159):

Երբ Թովմայ կը մեռնէր, իր ետեւը կը թողուր սգացող աշակերտներու խումբ մը: Անոնցմէ շատերուն անունները յիշատակագրութիւններու միջոցով մեզի հասած են (համառ. Նոտարք, էջ 147): Անոնցմէ մին եղած է Յովհաննէս, որ Քաջբերունեաց եպիսկոպոս ընտրուած է: Յաւալի է որ չենք գիտեր թէ ո՛վ կարդուեցաւ Թովմայի յաջորդ Մեծոփի մէջ: Հազիւ 1464ին Մեծոփի առաջնորդ կը յիշուի Վարդան<sup>33</sup>: Այս թուականին «ի վանս Արզելան ի խնդրոյ Վարդանայ առաջնորդին Մեծոփայ վանից» կը գրուի Շարակնոց մը (Մառ. Ն., Յուլ. հայ. Չեռ. Սեւանայ, էջ 47, Թ. 110):

Տասնեակ տարիներ յետոյ Մեծոփի մէջ կը ծագի Աստուածատուր վարդապետը, որուն խնդրանքովը 1523ին Գրիգորիս Աղթամարցի կը գրէ «Մարկոսեան ասեն հերիք արա» տալը, ուր կայ՝

«Գերի Գրիգոր անյիշելի,  
Եւ անպիտան Աղթամարցի,  
Աստուածատուր Մեծոփեցի  
Յինչն խնդրեաց եւ ես գրեցի<sup>34</sup>»:

Յովհաննէս Արճիշեցիին Մաշթոցի մը մէջ կը գրէ՝ «Եւ եւն աթոռք եւ առաջնորդք սուրբ ուխտիս Մեծոփայ սուրբ Աստուածածնի տա-

ճարին եւ սուրբ վարդապետացն զերեզմանացն տէր Վարդան Արճիշեցիսկոպոսն եւ տէր Աստուածատուրն եւ Խաչատուր հերպէտն» (Հանդ. Ամս., 1930, էջ 47): Տէր Աստուածատուր Պոլսոյ պատրիարքական աթոռին վրայ կը բարձրանայ (1537—1550?) եւ իրեն համար կը գրուի Աղեքսանդր Մեծի վարքը (Յովսէփեան Գ., Խաղբակեանք եւ Պոօշեանք, 1928, էջ 241, 247): Հաւանորէն այս Աստուածատուրն է որ 1564ին կը յիշուի Մաշթոցի մը յիշատակարանին մէջ՝ «Եւ եղև գրաւորութեան սորա ի յերկիրս Քաջբերունի... ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Մեծոփայ տէր Աստուածատուր եպիսկոպոսին եւ տէր Թադէոսին» (Հանդէս Ամսօրեայ, 1930, էջ 47, ծն. 12):

Այս շրջաններուն կ'իյնայ Յակոբ բարուհապետի նահատակութիւնը: Հ. Ալիշան կը գրէ՝ «Անշուշտ Մեծոփայ վանից առաջնորդն էր» (Հայապատում, էջ 595, ծն. 1):

Ողբի մը մէջ կայ՝  
«... Չերկիրն Հայոց ազգին Թաթարի ազգն  
աւերեցին,  
Վանայ մինչեւ Երզնկան շինութիւն բնաւ  
չթողին,  
Շատ վանք եւ եկեղեցիք ի հիմանց խախտեալ  
փլուցին,  
Բազում գիրք ու Աստուածաշունչք դայն ա-  
մինն առեալ զերեցին,  
Շատ բերդ ու քաղաք առին, շատ երկիր հրով  
այրեցին,  
Ողորմ ողբալի բաներ որ եղաւ Արճէջ գաւա-  
ռին,  
Յակոբ քաջ բարունապետն երեսուն հոգով  
սպանեցին,  
... Մինչդեռ ի պաշտօն էին ի ժամու ահեղ  
գիշերին,  
Յակոբ վարդապետն սուրբ մեկնութիւն առ-  
նէր երազին,  
... Յորժամ զպաշտօնն արին, ժամարարն  
սպաս դնէին  
Յանկարծ զղրդումն եղև թէ Եաշի(չի)քն  
զմեղ կոխեցին,  
Անողորմ ի ներս մտին սուսերօք գնոսա սպա-  
նեցին,  
Մինչդեռ պատարագէին զամենն սրով մաշե-  
ցին...  
Յորժամ նահատակեցին եւ զտաճարն հրով  
այրեցին...»

<sup>33</sup> Թովմայի եւ Վարդանի օրերուն Մեծոփայ վանքին եւ Արճիշի մէջ անուանի կ'ըլլայ Յովհաննէս Մանգասարեանց, որ իր բովանդակ կեանքը կը նուիրէ մատաններ արտագրելու, որ «ՀԲ. տարի ամսուն եւ ձմեռն, գիշեր ու ցերեկ ի գրել եկաց... մինչ ի վաղ-ձան, որ հանդես ի Քրիստոս 22 ամաց» (Լալայեանց, Յուլ. հայ. Չեռ. Վասպ., էջ 659—660, համառ. եւ Յովսէփեան, Թովմայ Մեծոփեցու կեանքը, էջ 2-2. — այս գրքին մէջ տեսնել նաեւ Թովմայի միւս աշակերտ-ներու մասին):  
<sup>34</sup> Հանդէս Ամսօրեայ, 1915, էջ 26, ուր Ակի-նեան Հ. Ն. կը խորհի նաեւ թէ՛ գուցէ Գրիգորիս Աղթամարցի Մեծոփի մէջ ալ ժամանակ մը բնակած ըլլայ. համառ. նմանապէս կոստանեանց, Գրիգոր Աղթամարցի, էջ 48—53 եւ Ակիւնեան Հ. Ն., Չաքարիս եպ. Գնունեաց, էջ 6, ծն. 1:

Յակոբն<sup>35</sup> էր ընտրեալ ազգօք եւ լցեալ եօթնարկեան շնորհօք,  
Մաքուր՝ յաշխարհի կացեալ, զարդարեալ  
անճառ պսակօք...»:  
(Հայապատում, էջ 294—295):

Այսպիսի եւ համանման իրողութիւններու եւ Մեծոփի անկումին տխուր պատկերներու առջեւ Միմէոն Ապարանցի, որ Մեծոփի մէջ գործած եւ արդիւնաւորուած է (Հանդ. Ամս., 1919, էջ 80—81) կրնար երգել ու ողբալ.

«Այլ նոր աղետըս զիս լըլկէ,  
Եւ դիմացուածըս պաշարէ.  
Յաւ ընդ ցաւոց յարարարէ,  
Եւ յանհարիւնս խուճապէ:

Տեսք սուրբ ուխտին զիս խոցոտէ,  
Եկեղեցեացս որ խաւար է.  
Չամենեսեան 'ի յողբ շարժէ,  
Լաց եւ 'ի սուգ նըստուցանէ:

Առ քեզ են բանքս սրբտաւըրոփ,  
Ո՛վ հրաշալի սուրբը Մեծոփ.  
Տեսուն ողկուղին հընձան եւ գուր,  
Անմահ հացին ամբար անիփոփ:

Տուն Աստուծոյ Տաճար եւ տուփ,  
Մեղաւորաց քաւիչ եւ սիփոփ.  
Ի քեզ բնակէ աներեւոյթ,  
Որդին 'ի ծոց Մօրըք լուսոյդ:

Աստուածաբնակ խորան առոյգ,  
Յոհաննիսէ շինեալ նորոգ.  
Դըշխոյ անմահ փեսային զոյգ,  
Գըրկախառնեալ յանախան անշոկ:

Մի՛ բարկացիս՝ թէ հարցանեմ,  
Չպատճառն՝ յորմէ աղքատացար.  
Արդ յաւելից ընդ քեզ զըրոյց,  
Ո՛վ բարձրաբերձ լուսակառոյց:

Վասն է՞ր զոչես սըրտէ խորոց  
Յորդուոց՝ կարօտ որպէս ամլոց.  
Ո՛ւր են ընտիրքըն քո ծնընդոց  
Սըրբասընունդ դասքն օծելոց:

<sup>35</sup> Գուցէ այս Յակոբն էր որ կը ստանար Միլոտիչի գրած Գանձարանը, որուն մէջ «Մեծոփայ» վրայ գանձ մը կար (Աճառեան, Յուլ. հայ. Չեռ. Թաւրիզի, էջ 36): — 1534ին սկսած եւ 1580ին աւարտած Քարո-ղազքի մը մէջ կը յիշուի Միլոտիչ Մեծոփեցի (Մառ, Յուլ. հայ. Չեռ. ձեռ. արեւել. լեզուաց ի Պետեր-բուրգ, էջ 17):

Ո՛ւր է բարբառըն քո փողոց.  
Բարունապետք մեկնիչք զրոց.  
Ո՛ւր դասատուն մեծ իմաստնոց  
Որք հընչէին նըման ամպոց:

Ո՛ւր եղանակ քաղցրիկ երգոց  
Երաժշտաց մաքուր հոգւոց.  
Աւա՛ղ յիշման այս աղետոյս.  
Որ խոցոտեալ վիրօք լցոյց:

Ձի խաղանեալ է յաթոռոց  
Եւ պատասխան հարցանելոց.  
Ո՛ւր պաշտօնեայք եւ հոյլք զըպրոց  
Երգ՝ ալելուք՝ բուրմունք խընկոց:

Ո՛ւր բեմբասացն ընթերցելոց,  
Եւ գիշերի հըսկուսն արթնոց.  
Ահա եղծեալ ամենեցունց,  
Անհետացեալ ըստ երազոց:

Ո՛ւր է հանդերձդ ոսկեթելոց,  
Վերուստ անկեալն 'ի յերկնայնոց.  
Ո՛ւր երանին՝ վա՛շ զովելոց,  
Եւ ցանկութիւն կարօտելոց:

Ահա գնացեալ ըստ մեռելոց,  
Եւ կամ զանօթ կորուսելոց.  
Ո՛ւր է խընդրողըն քո տըրոց  
Սիրող ուսման եւ սուրբ վարուց:

Ո՛ւր վերածանողն հընոց նորոց  
Հըմուտ նըրբիցն եւ արտաքնոց  
Ահա ո՛չ ոք է 'ի միջի,  
Ո՛չ 'ի ծերոց եւ ո՛չ տղայոց:

Ո՛ւր է զամբարըն կազմելոց,  
Չահընկալից կարգ ընտրելոց,  
Ո՛ւր լապտերաց բորբոքելոց,  
Սպասաւորաց իւզն արկելոց:

Ահա խաւարն է քեզ ծածկոց,  
Մութն եւ նըսեմն արկեալ կըրկնոց.  
Աչիցդ լըցեալ որպէս ծովուց,  
Թացեալ մահճացն ընդ անկողնոց:

Իրբեւ զայրի կին տառապեալ,  
Եւ կամ յարանց հեռացելոց.  
Եւ ո՛չ ոք է մըլիթարող,  
Որպէս երբեմն Երբայեցուց:

Չարթի՛ր զարթի՛ր Երեմիայ,  
Չարթո՛ւ ընդ քեզ գտաւիզն ողբոց.  
Քանզի լըքեալ է յարկ սըրբոց,  
Քակտեալ տեղի ժառանգելոց:

Պախտեալ շինուածըն սեղանոց  
Որ կեանքս տայր մերձեցելոց .  
Օտարացեալ կոչեցելոցս ,  
Եւ հեռացեալ հրաւիրելոց :

Տեսք վեասային է ինձ հընոց ,  
Դէմք թագուհւոյն կըրակ եւ բոց .  
Պաւար սենեակն եղկելոյս խոց ,  
Մըթին տեղին զիս դառնացոյց :

(Սիմէոնի վարդապետի Ապարանցոյ վիպա-  
սանութիւն, Վաղարշապատ 1780, էջ 142—  
149) :

Ապարանցիին խօսքերէն յայտնի կը տես-  
նուի թէ՛ Երբեմնի ծաղկեալ վանքը ինչ-  
պիսի արգահատելի վիճակի մատնուած էր :  
Յովհաննէսի եւ Թովմասի պէս կարող ան-  
հատներ հարկաւոր էին, որպէս զի կործա-  
նած տունը վերականգնուէր : Անոնք չէրեւ-  
ցան եւ Մեծոփայ վանքը շտեմաւ իր Երբեմնի  
արեւոտ օրերը : Կիսամեռի մը կեանքն է,  
տկարի մը Խոսքը կեանքն է, որ անկէ վերջ  
ունեցաւ : — «Ի վանքն Մեծոփ, ի դուռն  
սուրբ Աստուածածնին, 1747ին Սահակ սար-  
կաւոյ կը կազմէ Աւետարան մը (Սար-  
գիսեան, Յուլ. հայ. Ձեռ. Մխթ. ի Վենետ.,  
Ա., էջ 692) : Իսկ 1671ին Մեծոփի վանահայր  
կը յիշուի Սարգիս լարունապետ՝ «Այլ եւ  
ճիշեւ աղաչեմ դմեծ բարունապետն մեր  
զՍարգիս վարդապետ առաջնորդ սուրբ ուխ-  
տիս Մեծոփայ, զի եղև պատճառ նորոգման  
(Աւետարանի) նորոգման եւ Մ. զիբք նորո-  
գեաց եւ եղ ի սուրբ ուխտն Մեծոփայ թվ.  
լրձի» (Ազինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ.  
Հ. Պատուրեանէն) : Գրեթէ մէկ դար յետոյ  
Մեծոփայ վանահայր կը գանենք Սողոմոն  
վարդապետը, որուն Սիմէոն կաթողիկոս  
(1763ին) հրահանգ կը տայ իր նուիրակին  
օգնել եւ դարնան էջմիածին անցնել (Դիւան,  
Գ., էջ 136. հմմտ. եւ անդ, Բ., էջ 291) :  
Սողոմոն վանքին ինչքերուն քինախնդիր էր  
եւ կը ջանայ անոր հրաշագործ աւետարանը,  
որ «պատճառաւ իւրիք մնացեալ (էր) ի կող-  
մանս Կոստանդինուպոլսոյ» բերել Քիւրտ  
Մուհամատ բէկի աղղեցութեամբն ու Սիմէոն  
կաթողիկոսի ձօնութեամբը (Անդ, էջ 484) :  
Վերջին շրջանի վանահայրներէն են՝  
Յովսէփ Օլախեան (Արեւելք, 1884, թ. 214)  
եւ Սահակ Վ. Բագրեւանդացի, որ միանդա-  
մայն Քաջբերունեաց առաջնորդ էր եւ վան-  
քին ամէն տեսակով ուղեր է օգտակար ըլլալ

(Շէրենց, Սրբավայրեր, էջ 93. Բիւզանդիոն,  
1904, թ. 2430 եւ Միրախորեան, Ուղեւորու-  
թիւն, Գ., էջ 29 եւ 35) :

Մեծոփի վանքը հարուստ եղած է կա-  
լուածներով : Իր թեմական գիւղերն էին  
Պաչերով, Փաղաղներ եւ Քրթան գիւղերը  
(Արեւելք, 1890, թ. 1820) : «Իւր սեպհա-  
կան աղարակը, կը գրէ Շէրենց, վանից  
տունը բաղկանում է մօտաւորապէս քսոսա-  
սուն տանից բաղկացած մի գիւղ, որոյ ամ-  
բողջ բնակիչք պարապում են վանքապատ-  
կան հողերով եւ այլ գիւղատնտեսական պա-  
րապմունքներով : Բացի այդ լայնատարած  
աղարակից, ձեռք բերուեցան եւ ուրիշ մի  
քանի կտոր ընտիր վարելահողեր, արօտա-  
տեղիք, խաչանց մակաղատեղիք...» (Սրբա-  
վայրեր, էջ 91—92) : — Ենթարկուած է Աղ-  
թամարի իրաւասութեան (Հայապատում,  
էջ 283) : Հոն կը նստէր Քաջբերունեաց ա-  
ռաջնորդը. հմմտ. վերը եւ Միրախորեան,  
Ուղեւորութիւն, էջ 29) : Աւերումի առարկայ  
ԿՐԸԱԿ 1895ին եւ 1914ի պատերազմի տակն  
(Արարատ, 1896, էջ 89) :

13. ՆԱԿԱՅ ՎԱՆՔԸ

Հ. Սարգիսեան կը գրէ՝ «Յարեւմտա-  
կողմն դաշտին Արձիշոյ արտաքոյ նորին կան  
անշուք մենաստանքն Կենափորի վանք եւ Ար-  
ջոնից վանք, ընդ մէջ Մեծոփայ եւ Սիւրան  
լեռին : Իսկ ի ստորոտս սորա ի հարանց  
կուսէ փոքր մենաստանն Նաւկայ վանք»  
(Տեղագրութիւնք, էջ 269) :

14. ՈՒՌԸՆԿԱՅ Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔԸ

Վարդան Աշխարհազիր կ'արտայայտուի՝  
«Աղիովիտն եւ Քաջբերուի Արձէշ է, ուր  
կան սուրբ ուխտքն Մեծոփայ եւ Արծուարեր  
եւ Ուռնկարու սուրբ Նշան ամենազօր»  
(Saint-Martin, Mémoires, II, էջ 426. հմմտ.  
Ինձիճեան, Ստորագրութիւն, էջ 128) :  
Հին վանք մըն է <sup>36</sup>, արդէն 1315ին հոս  
կը գրուի Սամուէլ Անցիլի ժամանակագրու-  
թիւնը՝ «Գրեցաւ գիրքս ի յերկրին Արձիշու ի  
սուրբ ուխտս Ուռնկար անուամբ կոչի...  
ի ձեռամբ Հայրապետ սուտանուն կրանա-  
ւորի» (Թօփճեան, Յուլ. Դաղ., Ա., էջ 94  
եւ Արձաղանք, 1885, էջ 123) : Բաւական  
վերջ, բայց 1414էն յառաջ, կը գրուի Աւե-  
տարան մը՝ «Ի յանապատիս Ուռնկար կոչե-

<sup>36</sup> Գուլգէ նոյնը Մանուկ Ս. Նշանի հետ :

ցեալ ընդ հովանեաւ սուրբ եւ յաղթող եւ  
աստուածընկալ սուրբ Նշանի եւ սրբոյն Ստե-  
փաննոսի եւ առաքելոյն Պետրոսի... ի հայ-  
րապետութեան Տեառն Չաքարիայի ի յառաջ-  
նորգութեան տեղւոյս Ղազար կրօնաւորի...»  
(ապա կայ տաղիկ մը ի Ս. Նշան. Լա-  
լայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 249) :  
Իսկ 1456ին՝ «Յանկ ելեալ աւարտեցաւ աւե-  
տարանս... ի գաւառիս Քաջբերունեոյ որ  
կոչի Արձէշ ի դեղս Գայրիս ընդ հովանեաւ  
սուրբ Աստուածածնին եւ սուրբ Երրորդու-  
թենին եւ սուրբ Ուռնկարու սուրբ Նշա-  
նին... ձեռամբ Մինասի... ի խնդրոյ Ամիր  
բէկին» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ.  
Վասպ., էջ 423. հմմտ. նաեւ Նօտարք,  
էջ 183 ուր կայ սա ծանօթութիւնը՝ «Այս  
հոյակապ մենաստան, այժմ կայ անրնակ եւ  
ի ձեռս Այտարանցի քրդաց... եւ անկանի  
յարեւելից կուսէ Արծուարեր ուխտին եւ  
փոքրիկ հայ դեղջն Սոսկոնայ») :

15. ՍԻՄԵՆՆԵՆԻ ՎԱՆՔԸ Ս. ՆՇԱՆԻ ԿԱՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ  
Ս. ՆՇԱՆԻ ԵՒ ԿԱՐՈՒ ԿԱՐ ԵՐԱՍԵՆԱՒՈՐԻ ՎԱՆՔԸ ԵՒ  
ԱՌԵՐՈՒ Ս. ՅԱԿՈԲԻ ՎԱՆՔԸ

«Բիզնունեաց ծովի արեւմտեան կողմ ամ-  
բողջ եղբրքովն ինկած են նոյն դաւառի մօ-  
տաւորապէս երեսունի շափ բաղմահայ գիւ-  
ղերը եւ այդ ամէնքի մէջ Արձիշ քաղաքի  
այդեատանեաց վերեւ մի լեռնադաշտի վրայ  
կառուցուել է սքանչելին Սքանչելագործ  
վանք <sup>37</sup> իւր ճոխ ու հարուստ աղարակովն :  
Գիւղատնտեսական հարուստ պարագայիւքն :  
Սքանչելագործ վանքը Բիզնունեաց-Ատլշա-  
վազ-Գաւառի ամենանշանաւոր եւ կարելի է  
ասել մէկ հատիկ վանքն է. Բագունի Հայոց  
նուիրական ու պաշտելի սուրբ վայրն եւ  
ուխտատեղին : Դիրքն, օդն ու ջուր եւ ամէն  
ինչն սքանչելի, անուան համապատասխան»  
(Շէրենց, Սրբավայրեր, էջ 95—96) :

Սքանչելագործ անունով կնքուած է այս  
վանքը, վասն զի այնտեղ կը գտնուի Քրիս-  
տոսի մանկութեան ատեն լուացուած տաշ-  
տիկի մէկ մասունքը, որ ժողովրդեան աշ-  
ղօթքին ու հաւատքին վրայ սքանչելիք եւ  
հրաշալիք գործած է, երբ ան բնութենէն  
ժանտախտով, ծաղիկով եւ ուրիշ հիւանդու-  
թիւններով տառապելու ստիպուած է (Մի-  
րախորեան, Ուղեւորութիւն, Գ., էջ 42) :

<sup>37</sup> Թ. Մեծոփեցի կը գրէ՝ «Ճանապարհան կո-  
րոյ ճորոյ յետ լեբին սուրբ ուխտին Սքանչելագործին»  
(Պատմ., էջ 90) :

Իսկ Պատերազմի Ս. Նշան կոչուած է, վասն  
զի ունեցած զօրավիգն Ս. Պաչի եւ տաշտի  
մասունքները : Անուանուած է նաեւ Երաշ-  
խաւոր : Հ. Սարգիսեան կը գրէ՝ «Ընդ մէջ  
սորա եւ Արձիշոյ՝ հոչակաւոր մենաստան  
Երաշխաւոր կոչեցեալ ի հնունս եւ արդ  
Սքանչելագործ ի վերայ բարձրավանդակ լե-  
րին զուարճալի գրիւք եւ ուխտատեղի մեծա-  
համբաւ սակս նշխարաց ինչ ի սուրբ տաշ-  
տէն, յորում լուացեալ է Քրիստոս ի ման-  
կութեան : Չայս սուրբ նշխար չըլեցուցանեն  
ընդ երկիրն համօրէն ի ժամանակս մահարեթ  
եւ փոխադրական հիւանդութեանց : — Կայ  
եւ այլ Աւեր վանք <sup>38</sup> յելից Արձիշոյ ժամաւ  
հետի, որոյ կանգուն կայ եւ եկեղեցին շինեալ  
ի ՊՂԱ թուին, որպէս եւ արձանագրեալ է»  
(Տեղագրութիւնք, էջ 269, հմմտ. եւ Բիւ-  
զանդիոն, 1900, թ. 1103 եւ Բնաշխ. Բառա-  
րան, էջ 304) : Աւեր վանքի անունը «Նօ-  
տարք»ի հեղինակին համեմատ է Ս. Յակոբ  
(հմմտ. անդ, էջ 101 եւ 127) :

Երաշխաւոր Արձիշի հին վանքերէն է :  
Հոն է որ ժամանակ մը կ'ապրի Վահան  
Գողթնացին՝ «Գայր հասանէր ի գաւառն  
Բիզնունեաց ի գեղն, որում անուն էր Արձիշ  
եկեալ յանապատ որում անուն Երաշխաւոր  
կոչեն յոսն Մասեաց, որոյ առաջնորդ էր  
հայր ոմն Արտաւազդ, որ իբրեւ զԱրարհամ  
սիրով ընկալաւ զնա <sup>39</sup>» (Վկայարանութիւն  
Վ. Գողթնացոյ, ԺԳ., Սոփիքք, էջ 33—34.  
հմմտ. Ինձիճեան, Ստորագրութիւն, էջ 123) :

ԺԳ.—ԺԵ. դարուն դրուած ձեռագրի  
մը մէջ ներհիւսուած են հետեւեալ երկու  
հին յիշատակագրութիւնները : Մատթէոսի  
սկիզբը կայ՝ «Ձեռամբ Գրիգորի վարդապե-  
տին Քաջբերունեոյ ի թվին ԳձԼԳ (884) արէ  
ամսոյ է. ի սուրբ անապատին Լմա ի սկիզբն  
աւ. ի յանոցն Սքանչելագործին» : Իսկ Մատ-  
թէոսի վերջը՝ «Գրեցաւ ի սկիզբն թագաւո-  
րութեան Բագրատունեաց Աշոտոյ ձեռամբ

<sup>38</sup> Քանի մը ուրիշ Աւեր ու Ամայի վանքեր կը  
յիշէ նաեւ Միրախորեան, հմմտ. Ուղեւորութիւն, Ա.,  
էջ 105, 107, 194, որոնցմէ մի քանին մերձաւոր գիւ-  
ղերու վանքերն են եւ ծանօթ, սակայն իրեն անծանօթ  
մնացած, այսպէս էջ 194 (Ա.) յիշուած անծանօթ Աւեր  
վանքը Աթանանցի Սպիտակ եւ կամ Քարի Ս. Աստուա-  
ծածին ըլլալու է (հմմտ. անդ) :

<sup>39</sup> Հմմտ. Տաշեան, Մայր ցուց., էջ 817 «Եւ անտի  
եկեալ հասին (Վահան եւ իր ընկերակիցները) ի գա-  
ւառն Բիզնունեաց յոսն Մասեաց ի վանքն Արձիշոյ, որ  
կոչի Երաշխաւոր եւ հայր վանացն Արտաւազ անուն  
ակէր Արարհամ ընկալաւ զնա սիրով» : — Հայկական  
գրոյցի մը մէջ կ'ըսուի՝ «Գնա զու ի Սուկաւ կամ ի  
Սուրբ Ոսկի կամ յԵրաշխաւորն կամ ի Մաքենոյն»  
(անդ, էջ 299) :

Գրիգոր Մաշկեւորի ի ժամանակ հայրապետութեան Գէորգեա կաթողիկոսին, որ օծեաց զԱշոտ թագաւոր Հայոց ի թվ. մերում ԳՃԼԳ (884) եւ քաղոց ամսոյ Ժ. ի յանուն սրբոյն Սքանչելագործի վանիցն» (Արարատ, 1910, էջ 623): Ասկէ վերջ երկարատեւ լուսթիւն: Ապա «Սպասաւորք սուրբ ուխտին, որ կոչի Արծկէոյ վանք» 1205ին հետամուտ կ'ըլլան ձառնտիրի մը գնումին (Ալիշան, Հայապատում, Բ., էջ 475—482. — ձառնտիր մատենին ընդարձակ յիշատակարանին մերձուստ պիտի ծանօթանանք Տարօնի վանքերու մասին գրած եւ ի մօտոյ մամուլին յանձնելիք երկիս մէջ): Արծկէոյ վանքը Սքանչելագործն ըլլալու է: Վանքը նիւթական շատ լաւ գրութեան մէջ եղած կ'երեւայ որ՝ այնքան սուղ գրքի մը գնումին ձեւնարկուելը: Դար մը վերջը հոն կը գրուին Սոզոմոնի գործերը՝ «Փառք... գրեցի եւ հաստատեալ կառուցի... ի թուականութեան հայկազեան տոհմիս 242 (1317): Ես անպիտանս ի մանկուսնս եկեղեցւոյ Յոհան անուն գրեցի... ի գաւառիս Բիւնուսեաց յանապատիս Արծկէոս ընդ հովանեաւ աստուածաբնակ խորանացս սուրբ Սիոնի եւ մաւրս լուսոյ Աստուածածնիս եւ սուրբ աստուածընկալ նշանիս պայծառ անուամբ սքանչելագործիս...: Ով մանկուսք Սիոնի (յիշեցէք) եւ զառաջասացեալ զԹաղէս արեղայ, որ ստացաւ զտառս աստուածայշունչս անջինջ յիշատակ իւրն» (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 76):

Երկու տարի վերջ «յանապատս յԱրձկու վանս» կ'արտագրուի Աւետարան մը «յառաջնորդութեան Սիմէօն արեղայի» (Թօփճեան, Յուց. հայ. Ձեռ. Դաղեան Վրդ. ի, Բ., էջ 53):

Սիմէոնի յաջորդն է Յովհաննէս, որ կը յիշուի Աւետարանի մը յիշատակագրութեան մէջ «Յամի 22է (1338) երբորդի հայկազեան տոհմիս տուժարի գրեցաւ (աւետարանս յանապատիս Արծկոյ վանս առձայնելոյ ընդ հովանեաւ սուրբ մաւրս լուսոյ Աստուածածնի եւ սուրբ նշանիս Սքանչելագործի եւ այլ հաւաքեալ սրբոցս, յառաջնորդութիւն տեղւոյն Յովհաննէս հաւր... ձեռամբ անպիտան գրչի Յովանի» (Սիւրբէան, Յուց. հայ. Ձեռ. Հայկ. յ., էջ 73—74):

Երկար ժամանակէ մը վերջ 1415ին Յովհաննէս կը գրէ «Մատենան աստուածային որ կոչի Հարցմունք ի թուականութեան հայկա-

զեան տուժարի ՊԿԴ (1415) յերկիրն Արծրունեաց ի վանքս որ կոչի Սքանչելագործ ընդ հովանեաւ սուրբ խաչիս սքանչելագործի օծեալ ձեռամբ առաքելոյն Թաղէոսի (Ազգ. Հանդ., 1897, Բ., էջ 285, ուր էջ 286 ուրիշ յիշատակարանի մը մէջ կայ՝ «յեպիսկոպոսութեան արհիական աթոռոյս Բըզնեոյ տէր Յովհաննէսի»): Ապա 1428ին գրուած ձառնտիր-Տօնականի մը մէջ կը կարգանք՝ «Եւ... զձողիս սուտանուն Աբրահամիս յԱրծկէ քաղաքիս ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սքանչելագործ գորեղ սուրբ նշանիս» (Տաշեան, Մայր ցուց., էջ 584): Հաւանորէն վերոյիշեալ Յովհաննէս 1459ին կը գրէ Աւետարան մը՝ «Ի քաղաքս Արծկէ ընդ հովանեաւ ամենամաքուր սուրբ Աստուածածնի եւ սուրբ Ստեփաննոսի Նախավկայիս եւ ամենազօր սուրբ նշանիս պատերազմի...»<sup>40</sup> (Նօտարք, էջ 192—193): Այս յիշատակարանի հրատարակութենէ յետոյ «Նօտարք» ի հեղինակը կը յաւելուէ՝ «Թերեւս Սքանչելագործ Ս. նշան ակնարկէ» եւ իրօք ալ այդպէս է վասն զի 1464ին Յակոբ Նետարարենց Ս. Աստուածածին եւ Ս. Ստեփաննոս յիշելի վերջ կը գրէ «Եւ մերոյս մենաստանի Սքանչելագործ սուրբ նշանի» (Նօտարք, էջ 218—219): Շ. Ն. Ակինեանի Յիշատակարանաց Հաւաքումին մէջ կան դեռ երկու յիշատակարաններ (մին թ. 1465 Tübingen, 38 եւ միւսը Լալայեանցի անտիպ ցուցակէն, աւետարան Նղիվարդի եկեղեցւոյ) որոնց մէջ Ս. Աստուածածնէ եւ Ս. Ստեփաննոսէ յետոյ կը յիշուի Պատերազմի Ս. նշան): Այս առնները Սքանչելագործի առաջնորդն է Մինաս արքեպիսկոպոսը (հմմտ. Նօտարք, էջ 162, 166, 196): Իսկ 1461ին կը յիշուին «Մկրտիչ վարդապետ Արծկոյ Սքանչելագործին» եւ «Ատոմ հերպէտ» սուրբ Երաշխատը Աստուածածնիս» (Նօտարք, էջ 199—200): Ատոմ 1466ին կը գրէ Աւետարան մը «ընդ հովանեաւ... ամենազօր սուրբ նշանիս Պատերազմի» (Նօտարք, էջ 226): Անկէ երեք տարի յառաջ (1463ին) ուրիշ Աւետարան մը արտագրած է

<sup>40</sup> Միթէ յիշատակագրութեան մը մէջ յիշուած՝ «Վասիլ թագաւորի Ս. նշանիս» նոյն է «Պատերազմի Ս. նշանիս» հետ: Յիշատակարանն է՝ «Գրեցաւ հայկական թուականիս յանապատս Ազոսանաձոր ընդ հովանեաւ Մաւրս Լուսոյ Աստուածածնիս եւ Վասիլ թագաւորի Ս. նշանիս եւ այլ հաւաքեալ սրբութեանց... ձեռամբ ձեռամբ... Յակոբայ մեղապարս... հանդէպ սրբարար Տօփոն, ուր մանր մանր ձկունք կ'անեն...» (Բարխուդարեան, Արցախ, էջ 343, ուր կ'ըսուի թէ Ազոսանաձորի անապատը կը գտնուի «Վանայ կողմերում»):

հոն Յովհաննէս (Սարգիսեան, Յուց. հայ. Ձեռ. Միթ. Վենետ., էջ 620): Բաւական վերջը՝ 1486ին Նիկողայոս եպիսկոպոս «յանառիկ եւ ի տիրախնամ վանս Սքանչելագործ գորավարիս կը գրէ Աւետարան մը (Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 499), ինչպէս 1475ին ալ կ'աւարտուէր «քրիստոսասիրինս եւ քաջ նահատակաց եւ մարտիրոսաց հոգիարուզիս տառս... յԱրծկէ ընդ հովանեաւ... պատերազմի Ս. նշանին եւ Ս. Սքանչելագործին» (Պալեան, Յուց. հայ. Ձեռ. Մաղնիսայի թ. 11, էջ 34—36), եւ 1480ին կը գրուէր Ծերենցի Յայտաւարք մը (Քօնեան շ. Յ., Յուց. հայ. Ձեռ. Կարնոյ զիւղերու թ. 8, անտիպ, հմմտ. Յովհ. ք. Վաղարշակերացի, ձանապարհորդութիւն, Կ. Պ. 1870, էջ 21):

Վերոյիշեալ Մինաս եպիսկոպոսի տեղապահն եղած է Աստուածատուր (Ակինեան շ. Ն., Մատենագրական հետազոտութիւններ, Դ., էջ 123): Ետքէն Արծկէի եպիսկոպոս եւ Սքանչելագործի առաջնորդութիւնը կը ստանձնէ Յակոբ Նետարարենց, որուն կ'ըսանք Յակոբ Նետարարենց ընդարկեանքին եւ երկերուն մասին արդէն ընդարձակօրէն գրած է Շ. Ն. Ակինեան յառաջընթացի յառաջնորդութիւնները, որոնց մէջ Յակոբ եւ Սքանչելագործ Ս. նշան կամ Պատերազմի Ս. նշան կը յիշուին (հմմտ. Մատեն. Հետազոտութիւններ, Վիեննա 1938, էջ 119—139): Շ. Ն. Ակինեան զիտել կուտայ թէ Յակոբին յաջորդը տէր Ներսէս եղած ըլլալ կ'երեւայ (անդ, էջ 126):

Յակոբ Նետարարենց մէկ դանձ եւ երկու տաղ ձօնած է Սքանչելագործ Ս. նշանի (հմմտ. անդ եւ նաեւ Արարատ, 1895, էջ 127): 1501ին Յակոբ՝ Աւետարան մը (Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 615), 1502ին Գրիգոր՝ ձառնտիր մը եւ Մովսէս՝ Աւետարան մը կը գրեն այս վանքին մէջ (Ակինեան շ. Ն., անդ, էջ 126—128): Ապա 1503ին գրուած Աստուածաշունչ մը Յովհաննէս վարդապետ կ'ընծայէ՝ «Ի դուռն Սքանչելագործ Ս. նշանի» եւ կը մաղթէ «յիշեցէք զՄանուէլ արեղէն եւ զտէր Նիկողայոս վարդապետն եւ զեղբայրն Աստուածատուրն, որ ետուն վերստին զԱստուածաշունչս ի դուռն սուրբ Սքանչելագործին ձեռամբ եւ վկայութեամբ Աւետիք վարդապետին թվ. 20Թ» (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. շ. Պատերազմէն):

Տարիներ յետոյ (1590ին) կը գրուի Աւե-

տարան մը այս կարեւոր յիշատակարանովը՝ «Գրեցաւ սա ի քաղաքս Արծկէ ընդ հովանեաւ Մօրն Լուսոյ Աստուածածնին եւ Սուրբ Ստեփաննոսի Նախավկային եւ սուրբ Սքանչելագործ գաւրեղ խաչին եւ պատերազմի սուրբ նշանին ի թվականիս Հայոց Ռ եւ ԼԹ (1590) ամին ձեռամբ մեղսամած գրչիս Ներսէսի եւ ի մերումս առաջնորդութեան սուրբ Սքանչելագործին Ստեփաննոս քաջ եւ արի վարդապետին եւ եղբորն տէր Մարտիրոս արքեպիսկոպոսին» (Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 715): Եստ արքիներ վերջը՝ 1652ին կը գրուի Աւետարան մը՝ «Գրեալ ի թվ. ՌՃԱ. յԱրծկէ ի դուռն սուրբ Սքանչելագործին եւ Սիօնի, յառաջնորդութեան ուխտիս տէր Սիմէոնի արքեպիսկոպոսին, հերեպետին տէր Կարապետին, միաբանաց սորին տէր Թումայ մեղմագունին, եւ Սիմոն անիրաւին եւ անտես մամուն Եսայ Սուրբանին, հոգեւոր եղբոր իմոյ տէր Յակոբ Սուրբանին» (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. շ. Պատերազմէն):

Յատալ բերուած յիշատակագրութիւնները Սքանչելագործի մէջ բաւական բարգաւաճ վիճակ մը ենթադրել կու տան:

Վերջին ժամանակներու վանահայրներէն են՝ Գրիգոր Վ. Պլիւրքեան (Նօտարք, էջ 69), Բարդուղիմէոս Տէլոյեան (Արեւելք, 1884, թ. 214), Յովսէփ Ծ. Վ. Սօլախեան (Շէրենց, Սրբավայրեր, էջ 97), Յակոբ Լէսկցի (Բիւրակն, 1899, էջ 62), Մակար վարդապետ (Աշխատանք, 1911, էջ 765):

Սքանչելագործի վանքը տիրացած է զիւղերու եւ ազարակներու, դաշտերու եւ արտերու: Իր կալուածներու բազմութիւնն ու անոնց հասոյթները շատերը մղած են առաջնորդութեան հետամուտ ըլլալու եւ հարեան այլազգի տարրին ալ հրապոյր առթած կողոպուտի: Վասպուրականի շատ մը վանքերու հետ 1896ին կողոպուտի կ'ենթարկուի, շինութիւններէն մաս մը կ'այրուի, բայց բարեբաստօրէն Նղիշէ վարդապետ գանոնք կը վերաշինէ (Աշխատանք, 1911, էջ 765. Շէրենց, Սրբավայրեր, էջ 96—97): Վանի խառն ժողովքը 1902ին որոշում կու տայ զայն շինարարելու (Մանգումէի Էֆքեար, 1902, թ. 413):

16. ՎԱՐԴԵՆԻՍ ԿԱՄ ՊԱՊՂՈՅ ՎԱՆՔԸ  
Ծանօթ հետեւեալ յիշատակագրութեանէն՝ «Արդ գրեցաւ սա ի գաւառիս Քաջբերունոյ ի մենաստանի որ կոչի Վարդենիս»

